



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1884 411 - 418

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԷՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԷՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԷ.

22 ՓԵՏՐՎԱՐ 1885



Կ. ՊՕԼԻՍ

1885

ԳԻՒՆՆԵՐ ԱՋԳԱՑԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԳԻՒԱՆ

| | | | |
|-------------|--------|------------|-------------|
| Տիգրան | Էֆէնտի | Կուսուֆեան | Ա. Արենուշե |
| Քրիստոստուր | » | Ղազարոսեան | Բ. » |
| Յովհաննէս | » | Թորոսեան | Գ. » |
| Յակոբ | » | Պօղնակեան | Ա. Արենուշե |
| Մանփան | » | Տամատեան | Բ. » |
| | | | Գ. » |

Ձեռննաստրեան Գիւան

Մաաթէոս Եսկ. Իլվիրէան Արենուշե
Գարեգին Վրդ. Թաթարեան
Մարկոս Էֆէնտի Աղբէրեանց

Դաստիարակութեան Գիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Արենուշե
Գէորդ » Ապաուլլահ
Միքայէլ » Մամիկոնեան

Կարեւոր Գիւան

Քրիստոս Էֆ. Ղազարոսեան Արենուշե
Յակոբ » Եէմէնիճեան
Պօղոս » Թորգոմեան

Համարակարեան Գիւան

Կարապետ Էֆ. Սըլվանեան Արենուշե
Մկրտիչ » Ճանըմեան
Գառնիկ » Յովակիմեան

Յարաբերութեան Գիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արենուշե
Ռուբէն » Պուլկոճրեան
Վիշէն » Օրմանեան

Իրաստրեան Գիւան

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Արենուշե
Յովհաննէս ԲՆԵ. Մկրեան
Յակոբ Էֆէնտի Արշակ

Նախանձութեան Գիւան

Մինաս Էֆէնտի Չերաղ Արենուշե
Յովհաննէս » Արշակունի
Նշան » Պօյսանեան

Խմբագրութեան Գիւան

Կարապետ Էֆ. Իւլիւճեան Արենուշե
Հարարձոմ » Ալանանեան
Յակոբ » Գուրգէն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԷ.

22 ՓԵՏՐՎԱՐ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Պատրիարքական Տեղապահ Ս. Հայր.
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան.

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. — Ատենական գործողութիւնք.
- Բ. — Խնդիր Կաթողիկոսական և Տեղեկադիր համարատուութեան կաթ.
- Բ. Յանձնաժողովոյ.

Ընդ Նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Տէր Գէորգ Վրդ. Բուսճուգլեանի, Ատենապետ Էֆէնտի ատեանն կը բանայ ժամ և 1/2 րն, ի ներկայութեան 36 Երեսօխտանաց, որոց վերջին թիւը կը յանդի 60 ի :

Նիստերէն բացակայ մնալին գրով հաղորդած լինելով Գիւանին, Ատենապետ Էֆէնտի նոցա անուանքն յիշատակելէ յետոյ, իւր օրինաւոր բացակայք՝ արձանագրել կուտայ ի տուժարի ներկայութեան :

ԱՏԵՆԱԿՍՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

2.

1.

Երեսօխտանական հրաժարագիր Լեւոն ԷՅ. Գաբամաճեանի .

Բացակայութիւնք

Երեսօխտաններէն Գեր. Տ. Մատթէոս Եպս. Իգժիրեան եւ Մարուդէ Էֆէնտի Ֆրէնկեան ճամբորդութեամբ՝ թողալոյ մի քանի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մեր պաշտօնակիցներէն Գաբամաճեան Լեւոն Էֆէնտի իւր Երեսօխտանական պաշտօնէն հետեւեալ հրաժարագիրն յղած լինելով, կը լիութեամբ թողալոյ ներկայել զայն :

Գեր. Պատր. Տեղապահ Ս. Հայր,
Նախագահ Ազգ. Ժողովոյ.

Բնակութիւնս այժմ ի փարիզ հաս-
տատած ըլլալով, այլ ևս կարելի չ'է որ
վարեմ երեսփոխանական պաշտօն, յոր
կոչեցին զիս Եէնի-Գաբուի աղնիւ ընտ-
րողք, և զոր ընդունած էի սիրայօժաբ
իմովսանն ազգասիրական ծառայութիւն
մը մատուցանելու փափաքանօք :

Կուգամ այժմ մատուցանել զիմ
հրաժարական, յայտնելով իմ շնորհա-
կալիք առ աղնիւ Ընտրողս Եէնի-Գաբուի
այն մեծ պատուոյն համար որով պատ-
ուեցին զիս իւրեանց վստահութեան
քուէով, և դարձեալ՝ այն մեծ պատ-
ուոյն համար, որով Պատկառելի Ժողովդ
հաճեցաւ զիս իրեն աշխատակից ընդու-
նիլ :

Պատկառելի Ժողովոյդ ազգասիրա-
կան աշխատութեանց համար մաղթելով
յաջողութիւն, կը խնդրեմ որ բարեհա-
ճիք ընդունիլ զիմ այս հրաժարական
ընդ որ կը նուիրեմ զիմ ջերմ յարգանք-
ներ :

Մնամ

Գերապատիւ Հայրութեան Ձերում
ամենախոնարհ ծառայ

Լեոն Գաբամանեան

Բերայ 10 Փետրվար 1885

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Գաբամանեան Էֆէն-
տի, ինչպէս լսեցիք, իւր ընակութիւնն այ-
լուր հաստատած լինելով, կուգայ հրաժարիլ
Հետեւաբար սոյն օրինական հրաժարագիրն կը
փութամ ներկայել ժողովոյդ ընդունելու-
թեան :

Ձայս անելով Ատենապետ Էֆէնտի քուէի

կը դնէ Գաբամանեան Լեւոն Էֆէնտի հրա-
ժարագիրն, որ կ'ընդունուի միաձայնու-
թեամբ :

3.

Ծանօթութիւն ի Դիւանէ ի մասին ԺՁ. Եւ ԺԷ
նստերու ատենագրութեանց հրատարակման
յապաղման.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կաթողիկոսական
Յանձնաժողովոյն ստուար Տեղեկագրին հրա-
տարակութիւնն արգելք եղան մեզ վերջի
երկու նիստերու ատենագրութեանց հրատա-
րակման : Հետեւաբար Դիւանս կը լսօտանայ
յառաջիկայ նստին զայնս Ձեր ընդունելու-
թեան ներկայել :

Ժողովն ատենագրութեանց հրատարակու-
թեան յապաղման մասին, Ատենապետ Էֆէն-
տի կողմանէ արուած բացատրութիւնն զու-
հասցուցի զտնելով, կանցի ատենական միւս
զորժողութեանց :

4.

Պաշտօնագիր Ազգ. Վարչութեան Կրօն. Ժո-
ղովոյ յաղագս հաստատման մի Ընծայարանի.

Ատենապետ Էֆէնտի յայտնելով թէ՛ Կրօն.
Ժողովէն պաշտօնագիր մը յանձնուած է Դի-
ւանին, կը հրաւիրէ զԱտենապետ Էֆէնտի
ընթեռնուլ զայն :

Մեծաշուք Ատենապետ Էֆ.

Ազգ. Երեսփ. Ժողովոյ.

Ազգ. Վարչութեան Կրօն. Ժողովն
քաջ համոզուած լինելով որ Հայաստան-
եայց Ս. Եկեղեցին Հայոց ազգին նեցու-

կին, պաշտպանն և պահապանն է, և թէ նորա պաշտօնեայք որքան առաւել քաջակիրթ և զարգացեալ լինին յուսմունս և ի դիտութիւնս, այնքան առաւել իւրեանց Ս. կոչմանն կը համապատասխանեն և օգտակար կը հանդիսանան անձանց և ազգին, և եկեղեցականութեան հետ կը բարձրացնեն և զԱզգն և զեկեղեցին. — Կրօն. Ժողովն քաջ համոզուած լինելով միանգամայն որ եկեղեցական դասուն հակառակ դրից մէջ գտնուին, այսինքն իւր բարձր կոչման համաձայն ուսումն և գիտութիւն չունենալն՝ հաւասարապէս փնասակար է և Եկեղեցւոյն, որոյ պաշտօնեայն է և ներկայացուցիչ, այնպէս որ տգէտ եկեղեցականութիւնն ոչ միայն նուստ վիճակ մը կունենայ, այլ կը նուստացնէ իւր հետ միանգամայն զեկեղեցին և զԱզգն — Կրօն. Ժողովն՝ սոյն և առաւել քան զսոյն պատճառներով, յառաջին օրէ անտի ընտրութեան իւրոյ, լուրջ նկատողութեան առաւ եկեղեցականաց դաստիարակութեան խնդրն, ըստ իւրում ոչ միայն եկեղեցական՝ այլ և Սահմանադրական պարտականութեան: Եւ հետեւաբար որոշեց որ Մայրաքաղաքիս մէջ նախ և առաջ բանայ ընծայարան մը, յորում՝ եկեղեցականութեան փափաքող դպիրք մարդուին և հրահանգութեան յեկեղեցական գիտելիս և յուսումն կարևորս վիճակի իւրեանց:

Ազգային վարչութեան Կրօն. Ժողովոյ սոյն որոշումն կը հաղորդեմք ահաւասիկ Ազգ. Պատ. Ժողովոյ հանդերձ ծրագրուն ուսմանց, որ պիտի աւանդուի ընծայացուաց հնգամեայ շրջանի մէջ:

Կրօն. Ժողովն կը ներկայացնէ միանգամայն և այն աղբիւրներն, զոր որոշած է յապահովութիւն տնտեսութեան նոյն ընծայարանի:

Ազգ. Ժողովն պիտի տեսնէ թէ առ ի զոյժ այլ հասութից՝ Կրօն. Ժողովն ստիպուած է Մայրաքաղաքիս իւրաքանչիւր թաղերուն տարեկան հասութից համեմատ տուրք մը սահմանել. $\frac{3}{100}$:

Կրօն. Ժողովն կը հաւատայ թէ Պատր. Ժողովդ պիտի հաճի ընդունիլ սոյն առաջարկն և վաւերացնել անյապաղ զայն, նա ուրախ պիտի լինի և թէ Ազգ. Ժողովն առաւել ապահովագոյն և առաւել գործնական հասութի աղբիւր մը գտնէ և քուէարկէ ի հաստատութիւն ընծայարանին, բաւական է որ օր առաջ ըստ սոյն հաստատութիւն, որուն այնքան պէտտ ունի Մայրաքաղաքս՝ ներակիրթ և ժամանակին պահանջմանց համեմատ պատրաստելի ընծայացուաց համար:

Ազգ. վարչութեան Կրօն. Ժողովն անտարակոյս է որ սոյն ընծայարանի անհրաժեշտ պէտքն իրեն պէս կ'զգայ Ազգ. Ժողովն և ս, և թէ՛ սոյն հաստատութիւն այնքան օգտակար պիտի լինի Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն, որքան պատուաբեր այն Ազգային Ժողովոյն, որ ընդգրկէ զայն և հաստատէ ի բարգաւաճանս Հայ եկեղեցականութեան և ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Մնամք ողջունել ի Գրիստոս Ի իմաց Ազգ. Կեդրոնական վարչութեան Կրօն. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Վ. Վրլ. Տ. Միհասեան Խորեն Արքեպիս.
22 Փետրվար 1885 Կ. Պոլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակոյս չ'կայ Տեարք, որ ամենքնեղ ալ հաճութեամբ սրտի լսեցիր Պատ. Կրօնական Ժողովոյ սոյն առաջարկութեան գիրն, եւ անշուշտ դուք եւս պիտի ընդգրկէք զայն: Այլ սակայն, որինաւոք ալ էս շարժած լինելու համար, հարկ է որ սոյն առաջարկութիւնն նախ յղուի իրեն յառաջ ձեռնհաս Դիւանին ի ըննութիւն եւ ի տեղեկագորութիւն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ըստ որում այդ առաջարկն դրամական ինդիք մ'ալ կը պարունակէ, ուստի հարկ է որ Համարակալութեան Դիւանի բովին ալ անցնի:

ՄԷՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Նկատելով որ ինքորոյն մէջ դրամական մաս մնալ կայ զընձութեան կարօտ, ինչպէս ըսաւ Ղազարոսեան էֆէնտի, ուստի ես եւս ըստ մեր Ներքին կանոնադրի՝ կառաջարկեմ այդ գիրն յղել Նախաձեռնութեան եւ Համարակալութեան միացեալ Դիւանաց ի ըննութիւն եւ ի տեղեկագորութիւն:

Տ. ԽՈՐԷՑ ԱՐՔԵԹԻՍԿՈՎՈՍ ՆԱՐ-ՊԷՑ. — (Իբր Ատենապետ Կրօն. Ժողովոյ) Կառաջարկուի Կրօն. Ժողովոյ այդ առաջարկն յղել ձեռնհաս Դիւանին ըննութեան: Սակայն նշուցաւ որ ինդիքն կարի ստիպողական է, կառաջարկեմ որ Պատկ. Ժողովը որոշ պայմանաժամաւ մը կատարէ այդ յղումն:

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ. — Մէկ ամիս պայմանաժամ կառաջարկեմ:

ՅԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, մէկ ամիս պայմանաժամաւ պէտք է յղել:

Հետեւաբար Ժողովն Գեր. Տ. Խորէն Սըրբազանի կողմանէ ցոյց տրուած ստիպողականութեան վրայ, կՈՐՈՇԷ սոյն առաջարկու-

կութեան գիրն յղել Նախաձեռնութեան եւ Համարակալութեան կրկին Դիւանաց ի ըննութիւն եւ ի տեղեկագորութիւն միասնեայ պայմանաժամաւ:

5.

Խնդիր նրաժարեցուցման Ժողովոյ նիստերին անպայման ժամանակաւ բացակայոյ Էրեսիխանաց.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ նախորդ նստի որոշման Պատ. Ժողովոյդ, Դիւանս փութաց պատրաստել ցուցակն այն երեսիխանաց, որք անորոշ պայմանաժամաւ Պօլսէն բացակայ կը գտնուին: Ուստի Օրակարգի չ'անցած, կը հրաւիրեմ Ատենադպիր էֆէնտի ընթեռնուլ զայն:

« Պատ. Ժողովոյդ վերջի նստին մէջ տրուած որոշման մը համաձայն, Մայր-Դիւանն փութաց հաղորդել Վարչութեան 1885 ի նստաշրջանի մէջ Ա. վիճակաւ դադարելի 4 եկեղեցական, 17 կեդրոնական եւ 8 Դաւառական, ինչպէս նաև զանազան պարագայներով պակասեալ 28 Երեսիխանաց ցուցակն, որպէս զի նոցա տեղ նոր ընտրութեանց ձեռնարկուելու համար հարկ եղած հրահանգներն յղէ որոց որ անկ է:

Իսկ այժմ, ըստ յանձնարարութեան Ժողովոյդ, կուգայ առ ինքն ներկայել ցուցակն այն երեսիխանաց որք անպայման ժամանակաւ մեկնած են Մայրաքաղաքէս եւ կամ անձնական տկարութեամբ երկար ժամանակէ ի վեր ներկայ չ'են գտնուած Ժողովոյս գումարմանց:

1. Յակոբ պէյ Խանտանեան (անձ.

նական զբաղմամբ 1 1/2 տարիէ ի վեր չէ եկած Ժողովի :

2. Կարապետ էֆ. Կիրճեան (հիւանդութեամբ բնաւ ներկայացած չէ Ժողով) :

3. Յակոբ էֆ. Պարոնեան (Մայրաքաղաքէս մեկնած է Էտիրնէ պաշտօնով, 1 տարիէ ի վեր) :

4. Սարգիս էֆէնտի Աղարէկեանց. (Մայրաքաղաքէս մեկնած է Էտիրնէ, պաշտօնով 1 1/2 տարիէ ի վեր) :

5. Մարկոս էֆ. Աղարէկեանց (Մայրաքաղաքէս մեկնած է Այնթապ պաշտօնով, 6 ամսէ ի վեր) :

Աղգային-Ժողովայն

| | |
|---------------|----------------|
| Ատենադպիր | Ատենապետ |
| Յ. ՊՕՇԵՆԱԿԵԱՆ | Տ. ԵՈՒՍՈՒՅՑԵԱՆ |

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներկայացեալ սոյն ցուցակին վրայ կը հրաւիրեմ զերեւոյթեան Տեարս յայտնել իւրեանց զիտողութիւնքն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Խանտանեան Յակոբ պէյ անցեալ տարի, իմ Ատենապետութեան օրով, նամակաւ մը ծանոյց ժողովոյն թէ՛ Քօլէրայի պատճառաւ կայսերական Առողջարանական ժողովոյ կողմանէ կազմեալ Յանձնաժողովին անդամ կարգուած լինելով, ժամանակ մը չ'պիտի կարենայ երեսփոխանական ժողովոյ նիստերուն ներկայ զըտնուիլ, հետեւաբար եւ մինք մեր հաւանութիւնն յայտնեցինք : Սակայն հարկ է գիտնալ թէ անկից ի վեր մէկ տարի անցաւ, Քօլէրան ալ անցաւ, բայց եւ այնպէս Խանտանեան Պէյ զարձեալ կը շարունակէ բացակայ գտնուիլ :

ԱՅՎԱԶԵԱՆ Ն. ԷՖ. — Հարկ է գիտնալ թէ Խանտանեան Յակոբ պէյ անդամ կարգ-

ուած է Առողջապահական մնայուն Յանձնաժողովին որ Ուրբաթ օրերն կը գումարի, ուստի բնականաբար չ'պիտի կրնայ ներկայ գտնուիլ ժողովոյն նիստերուն :

ՊՈՒԿՈՒԻՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ՛ աւելի օրինաւորապէս շարժած կրնայ ժողովս, եթէ զինքն հրաժարեցուցեալ յայտարարելէ առաջ՝ վերջնադիր մը յղէ :

ՄԿՐԵԱՆ Տ. Յ. ԲԱԶԱՆԱՅ. — Խանտանեան Պէյ իսպառ հրաժարեալ է ժողովոյն անդամակցելէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ղազարոսեան Քրիստոսուր Էֆէնտի իբրեւ նախորդ Ատենապետ ժողովոյն, Խանտանեան պէյ յի բացակայութեան պարագայից վրայ հարկ եղած տեղեկութիւններն տուաւ : Իսկ Այգաղեան էֆէնտի եւ Արժ. Մկրտան Հայր կը յայտնեն թէ՛ յիշեալն իւր պաշտօնին բերմամբ չ'պիտի կարենայ ժողովոյն նիստերուն այլ եւս ներկայ գտնուիլ : Ուստի Դիւանս կը կարծէ թէ՛ սոյն երեք յայտարարութեանց առջեւ՝ այլ եւս հարկ չ'մնար վերջնադիր :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Խանտանեան Յակոբ պէյ յի բացակայութեան մասին մեր երեք Պատ. Պաշտօնակցաց կողմանէ տրուած վկայութիւնք ըստ ինքեան բաւական են զինքն իբր հրաժարեցուցեալ նկատելոյ : Սակայն օրինաւորապէս շարժած լինելու համար, ինչպէս զիտել տուաւ Պուլկուբեան էֆէնտի, հարկ է վերջնադիր մը եւս յղել :

ԶԱՅՆԵՐ. — Հարկ չ'կայ :

Ատենապետ Էֆէնտի ներկայացեալ սոյն երկու առաջարկներն քուէի դնելով, ժողովն Յի դէմ 16 քուէով կՈՐՈՅէ զՅակոբ Պէյ Խանտանեան հրաժարեալ ընդունիլ երեսփոխա-

նութենէ, առանց երկրորդ վերջնագիր մը յընդու իրեն :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կարգն կուգայ Կիւրճեան կարապետ էֆէնտիի : — Հարկ է գիտնալ թէ այս Պատ. երեսփոխանն՝ հիւանթու թու թեամբ՝ իւր ընտրութեան առաջի օրէն չէ կրցած ժողովոյս նիստերուն ներկայ գտնուիլ : Այս մասին ժողովդ ի՞նչ անօրինութիւն կուզէ ընել :

ՄԷՐԵՏԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կը ցաւիմ որ Կիւրճեան էֆէնտի մինչեւ ց'արդ հիւանդութեամբ չէ կրցած ներկայ գտնուիլ ժողովոյս գումարմանց : Այլ ըստ որում մեր ներքին Կանոնագրի մէջ՝ հիւանդութիւնն իբր օրինաւոր պատճառ մը նկատուած է բացակայութեան , ըստ իս արժան է զիւր մ'ուղղել Կիւրճեան էֆէնտիի եւ հարցնել թէ՛ կուզէ՞ հրատարիլ երեսփոխանութենէ, եւ երբ բացասական պատասխան ընդունիմք , յայնժամ պարտիմք պահել զինքն ի շարս երեսփոխանաց :

ԶԱՆԱԶԱՆ ՆՍՍԱՐԱՆԵՆԵՐԷ. — Օրինական է այդ առաջարկն :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մէրեճմ-Գուլի էֆէնտիի սոյն առաջարկութիւնն կընդունի արդեօ՞ք ժողովդ , եւ կուզէ՞ ըստ այնմ շարժիլ Կիւրճեան էֆէնտիի նկատմամբ :

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, կընդունիմք :

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտի քուէի դնելով Մէրեճմ-Գուլի էֆէնտիի օրինական առաջարկն , ժողովն ԿԸՆԻՈՒՆԻ զայն եւ ըստ այնմ ԿՈՐՈՅԷՆ զԿիւրճեան կարապետ էֆէնտի հրատարակելէ յառաջ գրուեոր Կերպիւ հարցնել իրեն թէ՛ կուզէ՞ պահել զիւր երեսփոխանական ԱԹ ոտ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գալով Պարոնեան Յակոբ էֆէնտիի , նա եւս ճամբորդութեամբ մէկ ու կէս սարի է ի վեր հետացած է Մայրաքաղաքէս Անդրիանուպոլիս , առանց ժողովոյս ծանուցանելու եւ անէ պաշտօնիւ հաստատուած է :

Ժողովդ ի՞նչ անօրինութիւն կուզէ ընել սոյն երեսփոխանին նկատմամբ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ինչպէս հիւանդութիւնն , նոյնպէս եւ ճամբորդութիւնը իբր օրինաւոր պատճառ նկատուած է բացակայութեան ի կանոնագրի : Աստի հարկ է առ այս՝ Պարոնեան էֆէնտիի գրաւորապէս իմացնել թէ՛ կուզէ՞ շարունակել զիւր պաշտօն :

ՅԵՐԱԶ Մ. ԷՖ. — Մեր օրինաց մէջ ճամբորդութիւնն բացակայութեան իբր օրինաւոր պատճառ մը նշանակուած է : Բայց այս անբարդութիւն բառն կարի առանցքական բառ մ'է եւ առժամեայ ճամբորդութիւն մը կրնայ տարիներով երկարաձգիլ : Հետեւաբար հարկ է մի որոշ պայմանաժամ գծել ճամբորդութեանց տեսողութեան համար , զոր օրինակ Ս ամիս , եւ ի լրանալ սոյն պայմանաժամին , նոյն երեսփոխանն հրամարեցուցեալ յայտարարել :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ես կառաջարկիմ որ երեսփոխաններէն այն՝ որ առանց ժողովոյս զեկուցանելոյ կը բացակայի Մայրաքաղաքէս , հարկ է հրամարեցնել իբր Պոլսոյ մէջ գտնուող երեսփոխան մը : Իսկ նա որ գրաւորապէս կը ծանուցանէ մեզ իւր բացակայութիւնն եւ տարիներով չ'վերադառնար աստ , վերջնագիր մը յղել : Գալով Պարոնեան էֆէնտիի , այս մասին օրէնքն բացարձակ է եւ սլէտք է իբր երբ բացակայութիւն ունեցող՝ հրատարակել ընդունելի զինքն :

Ուրիւր գիտողութիւն չ'լինելով , Ատենապետ էֆէնտի նոյնպէս քուէի կը դնէ Պարոնեան

եան էֆէնտիի երեսփոխանութեան մասին երգած դանազան առաջարկներն , եւ ժողովն շիղէմ միաձայնութեամբ կՈՐՈՇԷ հրաժարեալ ընդունիլ զնա :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Բացակայից ցանկին մէջ կ'երևի նոյնպէս Աղաբէգեանց Սարգիս էֆէնտիի անունն , որ մէկ ու կէս տարիէ ի վեր Միւսիքիթիլութեան պաշտօնիւ կը գտնուի Անդրիանուպոլիս , առանց ծանուցած լինելու ժողովոյս իւր բացակայութիւնն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅՑ. — Հարկ է զիտնալ թէ երեսփոխանական նորոգ ընտրութեանց ժամանակն կը մերձենայ . հետեւաբար Պօլսէն բացակայ գտնուող բոլոր երեսփոխանք մամնքն մեկանց պէտք է հրաժարեցնել , որպէս զի նոցա տեղ եւս նոր ընտրութեանց հրաժանողներն զրկուին Վարչութեան : — Եթէ ես ալ չ'գամ ժողովի , զիս ալ հրաժարեցուցէք :

ՋԱՅՆԵՐ. — Քուէ՛ , ըուէ՛ :

Քուէարկութիւն կատարուելով , ժողովն նոյնպէս երեսփոխանութենէ հրաժարեալ կընդունի զՍարգիս էֆ. Աղաբէգեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. Այժմ կարգն կուգայ Աղաբէգեանց Մարկոս էֆէնտիի : Սա Մայրաքաղաքէս մեկնած պահուն իւր հրաժարականն մատուցած է , բայց ժողովս չէ ընդուներ , եւ իւր ձանապարհորդութեան տեւողութեան միջոցն իւր բացակայութիւնն օրինական համարուին որոշած է : Սակայն այժմ կը լսուի թէ Ա. յնթապի մէջ պաշտօնիւ հաստատուած է : Ուստի յայսմ մասին ալ վերջնական անօրէնութիւն մը ընել հարկ է :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐՊԷՑ. — Կուգամ զիտել տալ Ատենապետ էֆէնտի ,

թէ Մարկոս էֆէնտի Աղաբէգեանց միւս բացակայ երեսփոխաններէն տարբեր զիրքի մէջ կը գտնուի , ըստ որում Մայրաքաղաքէս մեկնած պահուն հրաժարական մատոյց , սակայն ժողովդ ուղղով բացառութիւն մ'ընել նորա համար , որոյնց իբր օրինաւոր բացակայ ճանչնալ զնա , որպէս իրաւամբ յայտարարեցիք սոսմ ' առաջ :

Ինձ կը թուի թէ պատշաճից օրինաց հակառակ կը լինի այժմ ելնել յանկարծ հրաժարեալ համարել զնա առանց կանխաւ զիբ մ'ուղղելու իրեն :

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅՑ. — Ես լաւ կը յիշեմ որ Աղաբէգեանց էֆէնտի մեկնած պահուն երբ կուգար իւր հրաժարականն տալ Հոս , հարցուցեալ իրեն թէ՛ իւր բացակայութիւնն առժամանակեայ է՞ թէ տեւողական , եւ նա յայտարարեց թէ այս մասին ինքն ալ որոշ բան մը չ'գիտեր , հետեւաբար ժողովն մերժեց իւր հրաժարական :

Իսկ այժմ որ բացակայութիւնն երկարած է եւ ինքն ալ պաշտօնի զուլս անցած , ես ալ կը ձայնակցիմ Տ. Խորէն Սրբազանի առաջարկութեան՝ որ է վերջնագրով մը հարցնել իրեն թէ՛ իւր բացակայութիւնն տեւողական է թէ ոչ :

(Ջանազան նստարսններէ հաւանութեանց ցոյցիք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Ով որ կը համակերպի Տ. Խորէն Սրբազանի եւ Մէրեէմ-Գուլի էֆէնտիի առաջարկութեան , թող հաճի յայտնել զիւր հաւանութիւն :

Հետեւաբար քուէարկութիւն կատարուելով , ժողովն չ'քուէի զչմ միաձայնութեամբ կընդունի ներկայացեալ առաջարկն եւ ըստ

այնպէս կործնել վերջնագրով մը հարցնել Ազա-
բէզեանց Մարկոս էֆ. ի թէ՛ կուզէ շարու-
նակել զիւր երեսփոխանական պաշտօնն :

6.

Կոնդակ օրհնութեան Ամեն. Տ. Եսայի
Պատրիարք Հօր առ Ազգային
Երեսփոխանական Ժողով.

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս արդէն գի-
տէք, Տեսաք Երեսփոխանք, Երուսաղիմայ
Ամեն. Տ. Եսայի Պատրիարքն երէկ մեկնեցաւ
Մայրաքաղաքէս իւր Սթան վերադառնալու
համար : Եւ ինչպէս որ Ազգային Վարչու-
թեան ներկայացուցիչ մարմինք փութացեր
էին ուղեկցել ն. Սրբազնութեան մինչ ի շո-
ղենու : Եւ Ատենապետն եւս պարտք հա-
մարեց ի զիմաց Ազգային Երեսփոխանութեան
յատկապէս շողենան երթալով, որչ Երթ
մաղթիլ Նորին Սրբազնութեան :

Ամեն. Տ. Եսայի Պատրիարք իւր օրհնու-
թիւններն քերանցել ինձ հաղորդելն ի զատ,
ծանոյց նաեւ թէ իւր հրաժեշտի ողջոյնն մա-
տուցած է՝ արդէն զբաւօր հաղորդելով իւր
շնորհակա լիքը եւ օրհնութիւնքն առ ժողովս :

Ձայս ասելով Ատենապետ էֆնտի կը
հրաւիրէ զԱտենաղայիւր Էֆնտի ընթեանու
իլեալ Կոնդակն :

ՅԵՍՈՒՍԻ ԲԻՍՈՍԻ ԴՍՈՒՅ ՏԵՐ
ԵՍՍՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԵՆՈՐՀԻԻ
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԼՈՂՈՅՆ ՊՍՏՐԻՍՐՔ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅՍ ԵՐՈՒՍՍ
ՂԵՄԻ ԵՒ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՍՈՒՐԲ ԵՒ ՏԵՍ
ՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՅՆ ԲԻՍՈՍԻ ՅՈՐՄԷ
ՀԱՍՅԷ ԵՆՈՂԲ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ
ՎԱՆՄԱՂԱՐ Եւ արդասէր Տիգրան էֆ.

Երուսաղեան բարեշնան Ատենապետի
Ազգ. Ընդհանուր Ժողովոյ և համօրէն
Վանմապատիւ և հայրենասէր Երեսփո-
խան Տեսաք բարեպաշտօն և մեծահաւատ
որդւոց մերոց սիրելեաց և հարազատաց
Առաքելական և Կաթողիկէ Ս. Եկեղեց-
ւոյս Հայաստանեայց և որոց ընդ Ձեզ
բարեպաշտուհի և հոգեւէր ընտանեաց
և բարեժառանգ զաւակաց կալ մնալ
ի խնամս Բարձրելոյն Աստուծոյ Հօր
Ամենակալի. ընդ փրկաւէտ Խաչիւն Տեա-
ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ի շնորհս
Ամենասուրբ Հօգւոյն կենարարի զար-
դարեալ ամենայն առաքինական բարե-
մասնութեամբք և ճոխացեալ հոգեկան
և մարմնական բարութեամբք յորդւոց
որդիս. Ամեն :

Եւ ընդ Քրիստոսաւանդ Ս. ողջունիս
և Աստուածային շնորհածաւալ օրհնու-
թիւնս յայտ առնեմք զի թէպետ փա-
փաքելով փափաքէաք անձամբ անձին և
կենդանի բարբառով բերանոյ ընծայել
զմեր Հայրական շնորհակալիս յաղագս
սիրոց և հոգատարութեան և նախանձա-
խնդրութեան Ազգ.օգուտ Ժողովոյդ առ
Առաքելական Ս. Աթոռս. և սակս յար-
գանաց և մխիթարական ընդունելու-
թեանց որ առ մեզ. սակայն՝ ըստ որում
ժամանակ պանդխտութեան մերոյ ողոր-
մութեամբ Տեսառն և շնորհիւ Ազգ. Ժո-
ղովոյդ լցեալ գոլով ունիմք յառաջիկայ
օրն հինգշաբաթի ելանել ի ճանապարհ,
սղադոյն աւուրց՝ նա մանաւանդ ծանօթ
տակարութիւն մեր չ՛նեքէ մեզ գոհացումն
տալ բաղձանաց սրտի մերոյ :

Ձփորձ առեալ գոլով բարեպաշտու-
թեան Ազգ. Ժողովոյդ և վստահ ի ներո-
ղամտութիւն Նորին, զոր անձամբ չ՛կա-

րեմք կատարել զբաղցր և նուիրական պարտս, այսու գործս օրհնութեան եւ ողջունի անեմք ի յլուսնս. շնորհս անչափս ուննիմք բազմադիմի պաշտպանութեան Ազգ. Ընդհանուր Ժողովոյդ դէպ յամենայն իրաւունս և սեպհականութիւնս Ազգ. մեծի Ս. Աթոռոյս ի Ս. Երկրին. դոհունակութիւնս իրաւուն մատուցանեմք առ այն նախանձամիտութիւն վասըն վառաց և պատուոյ Ազգ. Ս. Վանուցս զոր սիրայօժար վայելէ Միաբանութիւն Ս. Ուխտիս, և առ այն տքնութիւնս և վաստակս որ յազադս բարձման մեծագումար պարտուցն, և ի վերայ այսր ամենայնի մշտնջենաւոր ջանից որ յազադս բարոյական և նիւթական յառաջադիմութեան ամենայն եկեղեցեաց, բարոյական հաստատութեանց եւ բարգաւաճման ընդհանուր Ազգիս:

Ուստի բազկատարած հայցմամբ մաղթեմք զի օրհնեսցէ Տէր Աստուած զերեսփոխան Տեաքսդ զսիրելի զւաւկունս մեր և ծաղկեցուցէ յորդուց յորդիս, առողջ և երջանիկ կենօք պահեսցէ Ս. Հոգին շնորհաց և իմաստութեան շնորհազարդեսցէ և իմաստնացուցէ յամենայն որոշումնս Ձեր և յընտրութիւնս, և տացէ բան իմաստութեան խորհիլ եւ խօսիլ զհաճոյսն Աստուծոյ և զօգտակարն Ս. Եկեղեցւոյ և սիրելի Ազգին. ի սէր և միաբանութիւն պահեսցէ. ճոխացուցէ ամենայն հոգեկան և մարմնական բարեմասնութեամբ. լիացուցէ ամենայն բարութեամբ երկնից և երկրի, յաջողեսցէ զամենայն ձեռնարկս Ձեր զԱզգայինս և զանձնականս, ի փառս Ս. Եկեղեցւոյ, ի շահ Հայ Ժողովրդեան և ի մխիթարութիւն մեր:

Եւ զի ամենայն բարիք ծագումն առնուն ի Գահէն Օսմանեանց և յազնուական դանձուց հպատակասէր ողւոյ Նորին Օգոստափառութիւն Սուլթան Համիտ բարեխնամ Կայսերն մերոյ բարեխօսութեամբ բարձրապատիւ Նախարարաց և ամենայն յաջողութիւնք ձեռնարկութեան ազգիս ընդհովանեալ Օսմանեան Տէրութեան պսակին, ուրախութեամբ ողւոյ և բերկրութեամբ սըրտի ձօնեմք զմերս խորին և անկեղծ շնորհակալութիւնս երախտագիտական ի գահոյս Նորին Վեհափառութեան յազադս հայրական պաշտպանութեան որ ցայս վայր և առ յապայն. և շնորհապարտ զգացմամբ աղաչեմք զԵրկնաւոր Թագաւորն զի ընդ ամրածածուկ Այոյն պատսպարեսցէ զպատուական և զանգին Անձն Թագաւորին մերոյ Սուլթան Համիտ Կայսերն, ի ծագ արքայական գաւազանին հաստատուն պահեսցէ, յաջողեսցէ զամենայն ձեռնարկս Նորին Վեհափառութեան որ յազադս շինութեան և բարգաւաճման երկրին և հպատակացն զթու տէրութեանն Օսմանեան անխախտ և անսպան պահեսցէ. պահպանեսցէ և զկեանս բարձրապատիւ Նախարարացն և լուսաւորեսցէ զխորհուրդս նոցին. ի շինութիւն երկրին և բարգաւաճումն սիրելի Ազգիս Հայոց:

Առարեյական Արքեպիս Երբոյն Սրբոյ
Երուսաղեմի Պատրիարք
ԵՍՍՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տուաւ Օրհնութեան Կոնդակս
ի Մայրաքաղաքս Կ. Պօլիս

յամի Շնորհաց 1885 փետ. 11 եւ Հայոց
4377 մենեկան Կ. համար 67.

ՄԿԻՆԱՆ Տ. Յ. ՔԱՀԱՆԱՅ. — Կառա-
ջարկեմ յ'տոնկայս շնորհակալութիւն յայտնել
առ Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հայրն :

Սոյն առաջարկն կրկնուելով յ'ամենուտս ,
Ատենայետ Էֆէնտիի հրաւիրանօք , Երես-
փոխանք յոտնկայս շնորհակալութիւն կը
յայտնեն առ Ամեն. Տ. Եսայի Սրբազան Պատ-
րիարք Հայրն :

7.

Հարցում Գուրգէն Յ. ԷՖ. Ի մասին գործառ-
նութեանց Ազգային Ժողովին կարգեալ
Ելմտական Յանձնաժողովոյ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Որպէս կը յիշէք ,
ասկից շուրջ 5-6 ամիսներ յառաջ Ազգային
Ժողովոյս կողմանէ Ելմտական Յանձնաժողով
մը կարգուած էր եւ սլաշտօն ընդունած՝ որ
Ազգ. Վարչութեան հետ խորհրդակցութեամբ
պատրաստեն 1885-86 ի Կեդր. Սնտուկի Ել-
մտացոյցն , Հաստութից նորանոր աղբւրներ
գտնեն , եւ տրոց Կանոնադրի անգործադրե-
լիութեան պատճառներն քննելով տեղեկա-
դրեն Ազգ. Ժողովոյս :

Սակայն նկատելով որ մեր Սահմանադ-
րական նոր շրջանն կը մերձենայ , եւ ցարդ
յիշեալ Յանձնաժողովոյն կողմանէ որեւէ գոր-
ծառնութիւն տեղի ունեցած չէ , նոյն
Յանձնաժողովոյ ներկայ անդամոց կուգամ
հարցնել թէ՛ խնդիրն ի՞նչ վիճակի մէջ է եւ
թէ՛ Յանձնաժողովն արդեօք պիտի բե՞րէ զիւր
տեղեկագիր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրուի Յանձնա-
ժողովոյ ներկայ անդամներէն որ հաճին առ
այս տեղեկութիւն մը հաղորդել :

ՀԱՆՐԱՄԵՆԱՆ Մ. ԷՖ. — Իբր նոյն Յանձ-
նաժողովոյ անդամ , երկու անգամ Հրաւէր

ընդունեցայ ներկայ դտնուիլ դումարման ,
եւ երկու անգամուհն ալ անձամբ պատասխա-
նեցի եղած Հրաւէրին , բայց եւ այնպէս սաշ-
տօնակիցներէս ոչ ոք ներկայ դտայ : Ուստի
ըստ իս , այդ Յանձնաժողովն իբր կաղմա-
լուծեալ մարմին մը կը նկատեմ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Միթէ՛ այդ պա-
տասխանն բա՞ն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ Գուրգէն
էֆ. ի կողմանէ եղած հարցումն չ'կրցու լաւ
ըմբռնուիլ , որով եւ տեղի տուաւ տարբեր
բացատրութեանց :

Գուրգէն էֆէնտի կը հարցնէ թէ՛ Ազգ.
Ժողովէն կարգեալ Ելմտական Յանձնաժողովն
կը գործէ՞ , եւ թէ՛ ե՞րբ պիտի բերէ զիւր
տեղեկագիր :

Արդ , այս մասին Ժողովոյս ուրիշ բան
չ'մնար ընել , եթէ ոչ եղած հարցումն ի սաշ-
տօնէ հաղորդել յիշեալ Յանձնաժողովոյն՝ ի
ձեռն Գեր. Տեղապահ Ս. Հօր :

ՁԱՅՆԵՐ. — Շատ լաւ , շատ լաւ :

Հետեւաբար Ժողովն համակերպելով Ա.
տենայետ Էֆէնտիի կողմանէ եղած այն
օրինական առաջարկութեան , կանցի իւր
Օրակարգին :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
Ա .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգի անցնելէ
յառաջ , կը փութամ Ժողովոյ ներկայի տասն
երեսիլոսանաց կողմանէ Գլուխիս յանձնուած
հետեւեալ առաջարկն :

Վսեմաշուք Ատենապետ էֆ.
Աղգային Պատկառելի Ժողովոյ.

Կաթողիկոսական խնդրոյ փափու-
թիւնն ի նկատի առնելով ստորագրեալ
Երեսօրհանքս կ'առաջարկեմք դռնփակ
ընել յիշեալ խնդրոյ վիճարանութիւնն:

- | | |
|------------------|-----------------|
| Յ. Վրդ. Ալվագեան | Ս. Մանուկեան |
| Կ. Քննյ. Սեբեան | Ս. Տամատեան |
| Ո. Քննյ. Օհանեան | Տ. Հ. Պէլեւտեան |
| Մ. Մէլիքեան | Մ. Չօպանեան |
| Յ. Եւսեփեան | Յ. Գոնրգեան |

22 Փետրվար 1885 թ Ղալաթա

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներկայացեալ սոյն
առաջարկութեան զիրն, ըստ օրինի ժողովոյդ
քուէին կենթարկեմ:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Դռնփակ նստի
մասին խօսք կուզեմ:

ՄԻՆԱՍԵԱՆ Տ. Վ. ՎԱՐԴԱՊԵՏ. — Ես
ալ խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս մասին երեսօ-
խան Տեարց խօսք տալէ առաջ, Դիւանս
պարտաւոր է նախ օրինոց զիմել եւ տեսնել
թէ՛ ի՞նչ կը տրամադրէ այն:

Չայս ասելով, Ատենապետ էֆէնտի կըն-
թեռնու ժողովոյ Ներքին Կանոնադրի 29 րդ.
յօդուածն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք թէ օ-
րէնքն բացարձակ է այս մասին: Հետեւաբար
ձեռամբարձով առանց վէճի՛ ժողովն կորոյն
թէ՛ կուզէ՞ նիստն դռնփակ ընել:

Ձեռամբարձ քուէարկութիւն կատարուե-

լով, ժողովն ճի զէմ 22 քուէով կորոնէ
նիստն դռնփակ ընել:

(Յեր Կուէր-Կուէր)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կանցնիմք Կա-
թողիկոսական խնդրոյն:

Որպէս զիտքը, ժողովդ իւր ժԴրդ. նըս-
տին մէջ յանձնարարած էր իւր Ատենապե-
տաց Դիւանին զայս խնդիր եւս ուսումնասի-
րել եւ տեղեկագիր մը բերել, ուստի եւ Ձեր
Ատենապետաց Դիւանն առ ինքն եղած յանձ-
նարարութեան համաձայն՝ մի քանի նիստե-
րու մէջ հարկ եղած խորհրդակցութիւնն ը-
նելով պատրաստեց իւր տեղեկագիր զոր այ-
ժմ կը ներկայեմ Ձեզ, խնդրոյն վրայ երես-
փոխան տեսրոց խօսք տալէ յառաջ:

Չայս ասելով, Ատենապետ էֆէնտի կը
հրահրէ զԱտենադպիր էֆէնտի ընթեռնու
Ատենապետաց-Դիւանի տեղեկագիրն:

« Ատենապետաց Դիւանն Կաթողի-
կոսական յառաջիկայ ընտրութեան խըն-
դիրն նախապէս քննելու համար, ըստ
յանձնարարութեան Պատկ. Ժողովոյդ,
մի քանի անգամներ ի նիստ գումարե-
ցաւ, և յետ ուսումնասիրելոյ խնդիրն
իւր յարակից պարագայներով, որոշեց
առաջարկել Պատկ. Ժողովոյդ այս ան-
գամ՝ ես ըստ 1884 թ ընտրական եղա-
նակի՛ մասնակցիլ Կաթողիկոսական ընտ-
րութեան:

Հետեւաբար Ատենապետաց Դիւանն
սոյն հակիրճ տեղեկագրով կուգայ իւր
զայս առաջարկ ներկայել Պատկ. Ժողու-
վոյդ »:

Ատենապետ

Աղգային-Ժողովոյ Ատենապետաց Դիւանի
ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

- | | |
|--------------------------|--------------|
| Անգամք Ատենապետաց Դիւանի | |
| Ք. Ղազարուսեան | Կ. Իւրիւճեան |
| Մ. Չերսոյ | Կ. Սըվաճեան |

Սոյն տեղեկագրի ընթերցումէն յետոյ, Պատրիարքական Տեղապահ Ս. Հայրն լսօք կուզէ Կաթողիկոսական խնդրոյ յարակից կարեւոր միջադէպի մը առթիւ :

ՏԵՂԱՊԱՀ Ս. ՀԱՅՐ. — Տեսարք երեսփոխանք, երկու օր յառաջ Ռուսիոյ Գեղարքայութան միջոցաւ պաշտօնագիր մ'ստացայ էջմիածնայ Ս. Սինօզէն 1884 Գեղարքայեր 3 թուականաւ, որով կը ծանուցանէր թէ՛ Ռուսիոյ Կաթողիկոսութիւնն 1884 ի Կաթողիկոսական ընտրութիւնն անվաւեր համարած եւ հետեւաբար նորոգ ընտրութեան ձեռնարկել հրամայած է :

Սոյն պաշտօնագիրն թէեւ ըստ օրինի վարչութեան բովէն անցնիլ հարկ էր, այլ սակայն նկատելով որ վարչութեան սովորական նստին տակաւին ժամանակ կուզէ եւ թէ խնդիրն կարի ստիպողական է, հարկ համարեցայ սոյն պաշտօնագիրն Ազգային-ժողովոյդ հաղորդել անմիջապէս :

Ձայս յայտարարելէ յետոյ, Տեղապահ Ս. Հայրն Դիւանին կը յանձնէ՝ ի Ս. Սինօզէ եւ կած պաշտօնագիրն, զոր կ'ընթեռնու Ատենագիր էֆէնտի :

Նորին Գերապատուութեան Տեղապահի Պատրիարքին Հայոց Կ. Պօլսոյ ինքաւ ի Տէր,

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ ըստ ամենահպատակօրէն զեկուցման Տեսառն Նախարարին ներքին գործոց, անվաւեր համարելով զընտրութիւն Կանդիտատաց ի Պատրիարքական Աթոռ, Եղեալն ի Ս. Էջմիածին յ8 և յ9 Մայիսի այսր ամի, ԲՈՂՁՐԱԳՈՅՆ կամօք բարեհաճեալ է հրամայել առնել զնոր ընտրութիւնս Կանդիտատաց Մայրագոյն Պատրիարք Կաթողիկոս ամենայն Հայոց :

Արդ՝ զայսմանէ հասուցեալ ի գիտութիւն Ձերումք Գերապատուութեան և Հոգեգրօն Արքամոյց Կրօնական Ժողովոյ Մայրաքաղաքիդ և համայն հաւատացեալ Ձեզ հօտին, Սինօզս Սրբոյ Էջմիածնի յանձն առնէ Ձեզ հրաւիրել ըզհամայն հաւատացեալ Ձեզ հօտին ընտրել ի միջոյ իւրեանց համաձայն սահմանադրեալ կանոնաց և հոգւով միաբնութեան զմի պատգամաւոր, իբրև ներկայացուցիչ նոցա, և հրաւիրէ զՁեզ ի միասին ընդ ընտրեալ աշխարհական պատգամաւորին բարեհաճել, դալ հասանիլ ի Մայր-Սուրբ Աթոռս ի 19 րդօր Ապրիլի առաջիկայ 1885 ամի, առ ի հոգւով միաբանութեան, բարեպաշտութեան և սիրոյ ընտրել ի համայն հոգեւորականաց Ազգիս, ճիշտ պահպանութեամբ ծխից և արարողութեանց, սահմանելոց առ այս ըստ օրինի զարժանաւոր յաջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսուորչի ի կառավարել զԵկեղեցին Բրիտանի և զՀայրապետական թափուր մնացեալ աթոռն Կաթողիկոսութեան ամենայն Հայոց, որպէս զի՛ ընտրեալ զըլուխն Եկեղեցւոյ մերոյ վարեսցէ զՀայրապետական իշխանութիւն յամենայն ըստ անստեր իւր Աւետարանական վարդապետութեան և կանոնաց Օրինաց հարց ի պարժանս լրութեան ազգիս եւ ի պայծառութիւն մերոյ Սրբոյ Եկեղեցւոյ, Իսկ ի դէպս եթէ հանդիպեցի արգելանք ըստ զալուստ Ձեր ի Ս. Էջմիածին այսու նպատակաւ, յայնժամ բարեհաճեսցիք առաքել յիւրումն ժամանակի զնախանշանակեալ ի Ձէնջ ներկայացուցիչն :

Եւ եթէ՛ ըստ անակնունեի իմիք

դիպուածոց կամ դժուարութեանց ո՛չ յաջողեսցի ո՛չ հոգևոր ներկայացուցչի Ձերոյ, և ո՛չ աշխարհական պատգամաւորին անձամբ դաւ ի Ս. Աթոռս ի նշանակեալ ժամանակին, յայնժամ իրաւունք են Ձեզ և աշխարհական պատգամաւորին յայտնել կանխաւ Սինոզիս զգրաւոր կարծիս իւրեանց և զորոշումս վասն չորից արժանաւորագոյն ընտրելեաց (կանգիտատաց) յաստիճան Հայրապետական իշխանութեան, որպէս զի անարգելի կայսցի ընտրութիւն ի նշանակեալ աւուրն ըստ նախասահմանեալ կարգին ։ Իսկ յազուս ընտրելոյ զաշխարհական պատգամաւորս ի դիմաց Հայազնեայ ժողովրդոց և հոգևոր պատգամաւորաց ամենայն Հայազնակ վիճակաց Օսմանեան Պետութեան, Սինոզս Սրբոյ Էջմիածնի հաղորդէ ահա՛ Առաջնորդաց այնոցիկ վիճակաց առանձին առանձին ծանուցազրովք ։

Ի կնիք վերոյդրելոյն ամէնից, Սինոզս Սրբոյ Էջմիածնի հանդերձ ուխտիւ միաբանութեան Սրբոյ Աթոռոյս ամենաշնորհմեռանդն ազօթիւք առ Աստուած միջնորդութեամբ ամենայն սրբութեանց ի տաճարիս հանգուցելոց, հայցէ որպէս սգազգեաց հոգևորականաց, նոյնպէս և բարեպաշտ աշխարհականաց հօտի Ձերոյ, մեծաց և փոքունց զերկար կեանս, զյաջողութիւն ամենայն բարենպատակ դորձոց և զբարգաւաճութիւն ամենայն առաքինական ձեռնարկութեանց, պահպանելով զամենեւին զնոսա ընդ հովանեաւ ամենազոր Աջոյն իւրոյ անցնաս յա-

մենայն երևելի և աներևոյթ թշնամեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ . Ամէն ։

Տեղակալ Ատենապետի Սինոզի
ՄԿԲՏԻՑ ԱՐԲԵՊԵՍԿՈՎՈՍ

Անդամք Սինոզի .

Մետրոլք Եպիսկոպոս
Յովակիմ Եպիսկոպոս Տ. Գրիգորեանց
Երեմիա Եպիսկոպոս
Ներսէս Եպիսկոպոս
Մամբրէ Վարդապետ

Ատենազպիր. Ս. Մուշեղեանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ . — Խնդրոյն վրայ խօսք տայլէ յառաջ, թոյլ տուք ինձ, Տեաքք, որ Ձեր ուշադրութիւնն հրաւիրեմ մի ամենակարեւոր կէտի վրայ ։

Ամեն անգամ որ ժողովք զոնփակ կորոշէ գումարիլ, իւր այս որոշմամբ հասկցնել կուզէ թէ՛ ինչորոյն փափկութիւնն է որ կը պարտաւորէ զինքն այսպէս շարժիլ, զի զընդհանրակ նստի մէջ երեսփոխան մը աւելի խօսելու ազատութիւն կը վայելէ, ինչ որ չէ կարող վայելել զոնքաց նստի մէջ . սակայն ի՞նչ նշանակութիւն կարէ ունենալ մեր զընդհանրակ նիստերն եւ ի՞նչ տարբերութիւն զոնքաց նիստերէն, երբ եղած վիճաքանութիւնք կէտ առ կէտ եւ երբեմն խեղաթիւրեալ կը հրատարակուին երկրորդ օրն ի լրագիրս ։ Ուստի յատկապէս կուզամ խնդրել մեր խմբագիր պատօնակիցներէն որ առ այս հարկ եղած զընդութիւնն հաճին ընել, միայն եղած որոշումներն հրատարակելով, որպէս զի զոնփակ նիստերն իրենց կարեւորութիւնն չ'իրուսանեն ։

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅՑ . — Ես ըստ ամենայնի համամիտ եմ Ատենապետ Էֆէնտիի արդարացի գիտողութեանց, եւ կուտայարկեմ որ զոնփակ նիստերու մէջ տեղի ունեցած գոր-

ծողութեանց ի լրագիրս հրատարակելի մասերն, ուղղակի Մայր-Գիւանի միջոցաւ ի պաշտօնէ հաղորդուին ազգային լրագրաց :

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Այդ մասին թէ եւ որոշ օրէնք մը չունինք մեր առջեւ, սակայն հարկ է գիտնալ թէ ասկից յառաջ այդ ողբով ստաջարկ մը ներկայացաւ Ժողովոս, որ յղեց իւր նախաձեռնութեան Գիւանին ի քննութիւն եւ ի տեղեկագրութիւն : Նախաձեռնութեան Գիւանն եւս մի տարիէ ի վեր է որ բերած է զիւր տեղեկագիր որ Գիւանական Թղթոց մէջ կըսպատէ ի կարդին նկատողութեան առնուելու համար :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Հարկ է գիտնալ թէ այս ղգուշութիւնն ոչ թէ որոշմանց մասին է, այլ միայն խօսից, եւ կարծեմ խըմբադիրք տա այս կրնան համաձայնել Մայր-Գիւանին հետ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Բայց կան որոշումներ ալ, որք պէտք է գաղտնի մնան :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Այսչափ բազմաթիւ անձինքներէ բաղկացեալ Ժողովի մը մէջ կարելի չէ որ որոշում մը ղաղտնի մնայ : Ուրիշ բան է, որ խմբադիրք ազգասիրաբար չուզեն հրատարակել ղայնս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եւ իբր երեսփոխան եւ իբր Ատենապետ մեծ կարեւորութիւն կրնծանում այս կէտին : Ստոր է թէ մեր Ժողովին մէջ գաղտնի խնդրոյ մը վրայ երբէք խորհրդակցութիւն եղած չէ եւ չի կրնար ալ ըլլալ : Սակայն անուրանալի է թէ, յառաջ քան զորոշումն Ժողովին, եղած վիճարանութեանց մէջ այնպիսի կարծիքներ կը փոխանակուին, կամ վարչութեան կողմանէ այնպիսի յայտարարութիւններ տեղի կուենան, որոց հրատարակութիւնն անպատշաճ կամ անպատեհ համարուի : Եւ մինչեւ իսկ կրնան

տեղի ունենալ այնպիսի որոշումներ, որոց վրայ եղած վիճարանութիւնք չեն կրնար հրատարակուիլ նախ քան ղգործադրութիւնն նոյն որոշմանց, եւ եթէ այսպէս չ'ընեմք, ես եւս համակարգիք պիտի լինիմ նոցա՝ որք կրսեն թէ մեր ղաւտակ եւ ղանրաց նիստերն բնաւ ու եւ է տարբերութիւն մը չունին եւ ո՛չ ալ նշանակութիւն :

ՁԱՅՆԵՐ. — Գիւանի՞ն պէտք է յանձնել այդ խնդիրն :

ՈՒՐԻՇ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Գուրգէն է ֆէնտիի առաջարկն կընդունինք :

Բազմաթիւ նատարաններէ երեսփոխանք ձայնակցելով Գուրգէն էֆ. ի կողմանէ եղած առաջարկութեան, ըստ այնմ ԿՈՐՈՇՈՒՄ որ ղաւտակ նիստերու մէջ եղած զործողութեանց հրատարակելի մասերն՝ Մայր-Գիւանի միջոցաւ հաղորդուին ի հրատարակութիւն լրագրաց :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրինական առաջարկութեան մը համար խօսք կուգեմ :

Յայտնի է թէ՛ կաթողիկոսական Բ. Յանձնաժողովոյ տեղեկագիրն հրատարակուեցաւ : Ուստի հարկ է անոր յիշատակութիւնն եւս ի Գիւանէ ընել, որպէս ղի անցնի ատենագրութեան մէջ և ամբողջանայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կաթ. Յանձնաժողովոյ համարատուութեան տարագիր տեղեկագիրն արդէն ժամանակին բաշխուած լինելով երեսփոխան տեսրց, ըմական է որ կանցնի նոյն նատի ատենագրութեան մէջ :

Այժմ անցնելով բուն խնդրոյն, առանց միջամտելու երեսփոխանոց խօսից, հարկ կը համարիմ յիշեցնել թէ ղայս խնդիր երեք կէտեր կը սարունակէ իւր մէջ, զորս ոչտք է կարգաւ նկատողութեան առնուլ :

Առաջին խնդիրն է որպէլ թէ՛ այս ան

գամ ևս Թուրքիոյ Հայք պիտի մասնակցին Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան . Երկրորդն է՝ մասնակցութեան եղանակն որոշել , և Երրորդն՝ տնօրինել զարժանն ի մասին Սինոքի ներկայ պաշտօնագրոյն :

Ուստի, բնական կարգու, հարկ է նախ ժողովոյն առաջին կէտն որոշել թէ կուզէ՞ այս անգամ ևս մասնակցիլ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան :

ՁԱՅՆԵՐ. — Ետտ լուս . բուէ՛ , քուէ՛ :

Հետևարար յոռնկայս քուէտրութիւն կատարուելով , ժողովն միաձայնութեամբ կՈՐՈՇէ ի դիմաց Թուրքիոյ Հայոց , այս անգամ ևս մասնակցիլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ որ առաջին կէտին վրայ ժողովք իւր որոշումը տուաւ , կարգն կուգայ երկրորդ կէտին , այն է՝ մասնակցութեան ինչոյն :

Ինչպէս պահ մը յառաջ լսեցիք , Ատենապետայ Գիւսանն կառավարիչէ այս անգամ ևս՝ ըստ 1884 ի եղանակի մասնակցիլ ընտրութիւն Կաթողիկոսին Ամենայն Հայոց : Ուստի կը հրաւիրեմ զԵրեսփոխան տեսարս առ այս խօսք առնուլ և կարծիք յայտնել :

ՁԱՆԸՄԵԱՆ Մ. ԷՅ. — (Բեմն ելնելով) Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան ինչոյն մէջ իմ տեսածս սա է թէ՛ մեր ունեցած աղղեցութիւնն այս օնգամ զմեզ պիտի սահեցնէ , ուստի միջոց մը խորհած եմ որոյ զործադրութեամբ թէ՛ մեր բուէներն ի հաշիւ պիտի առնուին և թէ՛ արժանապատուութիւննիս պահուի :

Այժմ , խնդիրն իւր ամենապարզ վիճակին վերածելով օրինակաւ մը բացատրեմ :

Փաստաբան մը մի դատ ստանձնելով , կուզէ այս ինչ կամ այն ինչ կողմը ներկայա-

ցընել , բայց դատուորն կուտարիչէ ըսելով թէ՛՝ ուսկից զիտնամ թէ՛ դուք նոցա ներկայացուցիչն էք , ուստի և մաստարանն ապացուցանելու համար իւր օրինուոր ներկայացուցիչ իրաւունքն , կը դիմէ իւր մտրոց :

Արդ , ըստ այն օրինակի , ներկայ խընդրոյս մէջ ևս՝ կառավարիչեմ որ ժողովս իրեն ներկայացուցիչ համայն Թուրքիոյ Հայոց , նախ իւր ընտրելիներն և միանգամայն պատգամաւորներն որոշէ , և հրահանգ սոց Գաւառական Առաջնորդաց և Վարչութեանց ծանուցանել Սինոքին՝ թէ իրենց օրինաւոր ներկայացուցիչն է Կ. Պօլսոյ Աղք. ժողովն : Եւ ապա մէն մի դատաւ պարտաւոր լինի փոխանորդազիր մը խրկել Կեդրոնիս , զորս յանձնելով մեր պատգամաւորաց , յղեմը ի Ս. Էջմիածին և անդ հաստատեմք մեր օրինաւոր ներկայացուցիչ իրաւունքն :

Այս է ահա իմ առաջարկս , որոյ ընդունելութեամբ , ինչպէս որ խօսքիս սկիզբն յայտնեցի , թէ՛ մեր արժանապատուութիւնն պահած կը լինիմք և թէ՛ կարող ի դիմաց Թուրքիոյ Հայոց՝ մասնակցիլ ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան : Կը խնդրեմ իմ հեռատես պաշտօնակիցներէս չ'ընդդիմանալ այսմ , զի ընտրութեան ժամանակն կը մերձենայ և մեզ չէ կարելի ուրիշ կերպիւ յաջողիլ :

ՄԻՆԱՍԵԱՆ Տ. Վ. ՎԱՐԴԱՊԵՏ. — Բռնի որ մէն մի Գաւառ իւր ներկայացուցիչն ունի այս ժողովոյս մէջ , ըստ առաջարկի ձեռնման էֆէնտիկ՝ երնել վերստին գաւառներն փոխանորդութեան զիր ուղեւ մեզ ներկայացուցիչ իրաւունքն հաստատելու համար , անտեղի կը զանեմ :

Գալով իմ տեսութեանց , կը տեսնեմ թէ Աղղային ժողովն խիստ շատ զրաղեցու այս ինչոյն . ջտնանք կարուկ և զործնական ճամբայ մը բուէլ և շարունակ զրութիւն փոխե-

լու չ'եղնել ։ զի այդ փոխախառնակն կրնայ շատ տնտեսական իրեններ ծաղիլ ։

Ըստ իս , պէտք է յարգել 1884 ի եղանակն , որպէս կտաճաթիէ Ատենապետաց Գրասանն , և այս անգամ ևս նոյն ձևով մասնակցել , բայց ո՛չ վերատին բուժարկութեան ձեռնարկել , զի այդ կերպով պարտաւորած պիտի լինինք զՀամագումար ժողովն ևս ի նիստ գումարիլ , ինչ որ դժուարին է և կարօտ , ժամանակի , այլ մեր անցեալ տարուան Բքք ընտրելին առաջին հռչակել , Գրքն երկրորդ և անկից յետոյ առաւելագոյն քուէ ստացող եկեղեցեացիսն՝ երրորդ , և մեր սոյն երեք ընտրելեաց ցանկն յլել ի Ս . Էջմիածին ի ձեռն յատուկ պատուիրակաց ։

ՄԵԼԻՔԵԱՆ Մ . ԷՅԹ . — Սինոդի պաշտօնադիրն որ կարգացուեցաւ պահ մ'առաջ , ինձ համար երկու կէտ կը պարունակէ ։

Նախ ընտրութեան եղանակն և երկրորդ , հրատարակուող փոխանակ Պատրիարքարանի՝ ուղղակի Գաւառական առաջնորդաց խրկուելու կէտն ։

Այս երկրորդ կէտն այնքան կարևորութիւն ունի ինձ համար որ այս մասին ժողովոյս կողմանէ այսօր խի անմիջական տնօրինութիւն մը լինելուն կը փափոտիմ ։

Կը տեսնեմ թէ ժողովս իրեն վերապահել կուզէ ամենայն Հոյոց Հայրապետի ընտրութեան մասնակցելու իրաւունքը , արդ բանի որ այս գաղափարն կը տիրէ ի մեզ , ուրեմն հարկ է յանձնարարել Ազգային—Վարչութեան որ հրահանգ զրկէ Թուրքիոյ Գաւառական Առաջնորդաց յայտնելով թէ՛ նոքա իրենց ներկայացուցիչն ունենալով ստո երեսփոխանական ժողովոյս մէջ , իրենք ընաւ պրտասխանելու իրաւունք շուփին Սինոդական հրաւերին և թէ հարկ է զայնս վերագործնել , ստո ի Պոլիս ։ Սոյն ազգաբարբութիւնն ընելէ վերջ , որ ինձ համար մեծ կարևորութիւն ունի կըսէի , կարգն կուզայ ընտրութեան եղանակին՝ որ նոյնպէս հարկ է կտատարել համաձայն 1884ի դրութեամբ , փասն զի կարի դժուարին և կրնամ ըսել թէ

անկարելի է մեզ այժմ եղնել տարրեր եղանակ մը ընդունիլ ։

Ուրեմն եղբարկացնելով , կառաջարկեմ նախ յանձնարարել Վարչութեան որ կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան հրաւերի մասին հարկ եղած օրինական հրահանգն սոյս անմիջապէս Գաւառական Առաջնորդաց և երկրորդ , մասնակցել ընտրութեան համաձայն 1884 ի եղանակի ։

Իսկ զաւրով վերտօն բուժարկութիւն կատարելու կամ անցեալ տարուան ընտրելեաց ցանկն առնելու առաջարկութեանց , այս մասին ևս իմ ըսելիքներն կը վերապահեմ յայտնել իւր կարգին ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ . — Հարկ կը համարիմ

վերտօն Զեր ուշադրութիւնն հրատարակ սա կէտին վրայ թէ՛ նախ սարտիմք կաթողիկոսական ընտրութեան մասին մեր մասնակցութեան ձևն որչաւ և ապա անցին կերբորդ կէտին , փասնզի Սինոդի կողմանէ եկած պաշտօնագրին նկատմամբ մեր կողմանէ տեղի ունենալիք կարգադրութիւնն նոյն խի մեր այդ որոշանքն սլտի կրնայ բղիկիլ ։

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ . ԷՅԹ . — Խօսք կ'ուտար ինձ , Ատենապետ ԷՖէնտի ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ . — Խօսք տալէ յառաջ , համեցէք յայտնել թէ խնդրոյն ո՞ր կէտին վրայ կուզէք խօսիլ ։

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ . ԷՅԹ . — 1884 ի ընտրական եղանակի մասին ։

Ձէի ուղեր խօսիլ այս կէտին վրայ , Տեարք , ըստ որում զխտեմ թէ երեսփոխանք մեծաւ մասամբ առ այս իրենց կարծիքն կալմած են և հետեւաբար վերտօն խօսիլ ուղենը ջուրն հասանքն վեր հանել կը նշանակէ ։ Բայց ստիպուած եմ խօսիլ , զի կը տեսնեմ թէ այսօր Ատենապետաց Գրասանն տեղեկագիր մը

կը բերէ, որով կառավարիչ այս անգամ ևս ըստ ՏԷ Ի եղանակի՝ մասնակցել Կաթողիկոսական ընտրութեան : Թէ և այդ տեղեկագիրն ստորագրուած պահուն, յասկաւին Տեղադրոս Հայրն առ ինքն յԷԼԱՄ Սինոդի արաշտոնագիրն չէր յանձնած Դիւանին :

Արդարեւ ևս ալ Ասեհնապետաց Դիւանի անդամ եմ, բայց երբ տեղեկագիրն ներքեւ իմ ստորագրութիւնս չ'երևիր, պէտք չէ կարծել թէ՛ չ'ի ստորագրած, ըստ որում այդ եղանակին կը հակառակէի : այլ վասնզի անցեալ տարի ևս առ այդ՝ ձեռնպահ մնացած էի :

Պիտի ներէք անշուշտ, Տեառքք, որ այժմ դամ լուսարանել Սինոդի դրոյն մի բանի կէտերն : — Այդ պաշտօնագիրն որ 1884 Դեկտեմբեր 31 թուականն կը կրէ, և որ այսօր միայն կը հասնի մեր ձեռքն, կըսէ թէ « Թագաւոր Կայսրն անվուեր համարելով ընտրութիւնն և այլն » : Կը յիշէք, Տեառքք, որ անցեալ տարի երբ մեր ընտրութիւնն ուսարտեցինք, տեղեկագիրն նոս նոս կարդ մը զրբեր ուղղեցինք առ Տ. Մահար Սրբազան, որուն յանձնուած էր Թուրքոյ Հայոց պատուիրակի պաշտօնն, և որոց ի պատասխանի միմիայն մէկ նկատագիր ընդունեցանք որով մեզ կը հաղորդէր ընտրութեան արդիւնքն և ուրիշ ոչինչ : Ըսել է թէ ց'արդ պաշտօնագլխէ չ'զիտեմք թէ մեր ՏԷ Ի ընտրական եղանակն ի՞նչ ընդունելութիւն դրած է հոն, բայց Սինոդի սա գիրն կը յայտնէ թէ մեր անցեալ տարուան ընդունած եղանակն անվուեր նկատուած է . . :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — (ընդմիջմամբ) Բայց ինչո՞ւ չէք յիշեր նոս հոգեւոյս Ներսէս ՍՐԲԱՊԿԱՆԻ հրատարակած :

ՆՈՐԱՏՈՒՆԵԱՆ Գ. ԷՅ. — (Պատասխանելով) Եթէ այդ լինէր պատճառն, յայնժամ փոխանակ անվուեր ըսելու, պէտք էր ըսել « Կայսրն նկատողութեան առնելով ըզհրատարագիր Տ. Ներսէս Պատրիարքի կայն » :

(Շարունակելով) Ուրեմն մինչև որ ըստ բուսականին չ'լուսարանուիրք այն պատճառներու մասին՝ որոցմով անվուեր նկատուած է ՏԷ Ի մեր ընտրական եղանակն, չէնք կարող այժմ ևս ելնել ներկայ ընտրութեան մէջ այն եղանակին հետեւի :

Այդպիսի Ժողովն, իբրև օրէնսդիր բարձրագոյն մարմին մը՝ պէտք չէ որ այսպէս հասցնելով որոշումներ տայ, որպէս զի ի վերջէ ևս զայն փոփոխելու պարտաւորի. Իր մէջ մի որոշումներն իրը հեղինակութիւն մը՝ հարկ է որ իմաստութեան զրջմը կրեն յ'աչս Հայութեան :

ԱՅՎԱԶԵԱՆ Ն. ԷՅ. — Ես կառավարեմ որ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելէ յտանջ, նախ մեր Գուսաւական Երեւոյթանաց թիւն ամբողջացնեմք, վասնզի կը տեսնեմ թէ ԱՎ Գուսաւներ կան, որք ց'արդ երեսփոխան չ'են տուած :

Եթէ կառավարի թէ՛ արդ ընտրութեանց ձեռնարկելու համար նվաճագլխէ միջոց կը սկսի սի, այդ պարագայի մէջ ևս՝ արդար կը գտնեմ որ նոյն ԱՎ Գուսաւներն Կաթ. ընտրութեան խնդրայ մասին՝ իրենց բուճներն յղեն Կեդրոնիս, որպէս զի զայնս բարդելով մեր քուէներուն վրայ, կատարուի ընտրութիւնը :

ՁԱՅՆԵՐ. — Զ'ըլլար այդպէս տաղարկութիւն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը խնդրեմ Երեսփոխան էֆէնտիներէն որ չ'ընդմիջեն զԱտեանախոսն, զի ներկայացեալ խնդրոյն վրայ ումեն որ աղտոտէ յայտնել իւր կարծիքն, բայտկան է որ օրինոյ հակառակ չ'չարթի :

Այժմ, ի պատասխանի Նորագունեկեան էֆէնտիի, հարկ կը համարիմ ՚ի զիմաց Ատենայետաց-Դիւանի մի համաձայն բացատրութիւն տալ :

Ինչպէս Ատեհնապետաց Դիւանն նոյնպէս

Ձեզնէ շատերն ալ անտարակոյս զարմացան որ Նորատունկեան էֆէնտի Ատենապետաց Գիւանի անգամ լինելով հանդերձ, այժմ՝ ելնէ նոյն Գիւանին կողմանէ ներկայացեալ տեղեւ կազմին հակառակ խօսիլ :

Արդ, հարկ է գիտնալ թէ, ինչպէս անցեալ տարի Նորատունկեան էֆէնտի ձեռնպահ մնացած է, այս անգամ ալ չէ հակառակած այն խնդրոյ նկատմամբ Ատենապետաց Գիւանի կողմանէ արուած որոշման, որպէս՝ կը հաստատեն նոյն Գիւանի ատենագրութիւնը, յորըս բացօրոշապէս կը տեսնուի թէ Նորատունկեան էֆէնտի իւր կարծիքն վերադաճելով՝ համակերպած է Գիւանին միւս անգամակցաց կողմանէ յայտնեալ կարծեաց : Եւ ինչպէս ինքն յայտարարեց, անտարակոյս այսօր չ'պիտի ելնէր իւր նոյն համոզման հակառակն խօսիլ եթէ Սինօղի պաշտօնագիրն հոս եկած չ'ըլլար : Սակայն Սինօղի նամակին նկատմամբ իւր ըրած զիտողութիւններն չ'ենք կրնար բանաւոր նկատել, վասն զի եթէ Ռուսաց կայսրն առանց որ և իցէ պատճառ մը յայտնելու եղած ընտրութիւնըն չի վաւերացնէր, Ռուսաստանի մէջ չ'իսկ մարմին մը որ կրտենայ իրեն ըսել թէ՝ — Ի՞նչ իրաւամբ : Հետեւաբար ելնել անցեալ տարուան կատարուած ընտրութեան անվտեր նըկատուելուն պատճառն Տէի եղանակին վերադրել ուզելն բնաւ չի կրնար արգարանալ վստաքն զի բեկումն յայտարարող պաշտօնագիրն բացատրած է նորա պատճառն :

Այսօր մեզ համար անցեալ տարուան ընտրութեան խնդիր չ'կայ, այլ միայն նոր ընտրութեան, սա տարբերութեամբ որ այս անգամ Սինօղի մասնակցութեան հրահրագրերն փոխանակ Պատրիարքարանի միջոցաւ յղելու, եւ իւր ուղղակի Գաւառական Առաջնորդաց յղեր է :

ԱՅՎԱՋԵԱՆ Ն. ԷՑ. — Բայց Սինօղի այդ ըրածն նախատինք մ'է Պատրիարքարանին :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Ազդին նախատինք մ'է : Յաւալի բան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Անտարակոյս ամենքս ալ կը ցաւինք, սակայն այդ տեսակ ցաւակցական արտայայտութիւնք խնդրոյն օրինաւոր էր մը չեն կարող տալ : Հետեւաբար այս տեսակ պարագայի մէջ պէտք է աւելի պտղ արեամբ խորհիլ և դործել, և Ղաղարուսեան Քրիստոստոր էֆէնտի, իբր Ատենապետաց Գիւանի անգամ, եղած և որոշման իբր համակարծիք, պէտք է ամենէն աւելի ուղղութիւն ընծայէ այն կէտին :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — (Պատասխանելով) Բայց խնդիրն այսօր փոխուած է ընտրովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խնդիրն ուր որ էր, այժմ ևս հոն է : (Շարունակելով) Նորատունկեան էֆէնտի պատճառարանութիւնք հիմաւոր չեն երևնար ըսի, վասն զի Ատենապետաց Գիւանն սա համոզումն գոյացուցած է թէ՛ ինչպէս որ անցեալ տարի Պօլսէն ընտրելեաց ցանկ մը գնաց Ս. Էջմիածին և հոն ընտրութիւնն կատարուեցաւ համաձայն Պայաժէնիայի օրինաց, բայց և այնպէս իջման Տաճարին մէջ, երկրորդ ընտրութեան սրճուն, Տաճկաստանի Հայոց ընտրելին շահեցաւ մեծամասնութեան բուէն, ի՞նչ պատճառ կայ չի յուսալու թէ այս անգամ ևս մի և նոյն պարագան չի կրկնուի, կամ մեր երկր ընտրելեաց մի չ'ընտրուի :

Արդարեւ մենք հոս օրէնք մը ունինք որոյ կէտ առ կէտ զործադրման նախանձախնդիր եմք, սակայն անոնք ալ ունին իրենց յատուկ օրէնքն, որոց համաձայն կուզեն չորթիլ : Բայց և այնպէս ո՞վ կը տարտուկուի թէ՛ այն պատգամաւորներն որք անցեալ տարի դումարուելով Ս. Էջմիածին, իրենց ձայնն միացուցին Տաճկաստանի Հայոց ձայնին, այս տարի ևս

նոյն համեմատութեամբ չ'արժտի գործեն, որ պէս զի մի գուցէ չ'իյնէ ազգային բարոյական միութեան կասն :

Հետևարար անցեալ տարունէ աւելի բա- նուոր որոշում մը տուած չեմք լինիլ փոխել ուղղով 1884 ի ընտրական եղանակն, որոյ օգտակարութեան մասին հասողում գոյացուցած է և Ձեր Առեմնապետոց Ղիւանն. չ'ոտնամք յիշել նաև թէ՛ եթէ այդ եղանակն փոխել խոլ փոփաքումք, չեմք կարող, զի նութապես ժամանակ կը պակսի մեզ :

Գալով Այլաբեան Նշան Էֆէնտիի՝ Գաւառական Երեսփոխանաց թուոյն ամբողջացման մասին ըրած առաջարկութեան, այդ ևս Սահմանադրութեան վերաբնութեան վերաբերեալ ինդլը մէ՛, որ յարակցութիւն չ'կրնար ունենալ մեր ներկայ վիճարանութեան հետ: Այս առթիւ մի անգամ ընդ միշտ կը յայտնեմ թէ՛ մեզ համար Գաւառական և Կէրոնական Երեսփոխան չ'կայ : Ընտրեալն, ուսկից ալ որ ընտրուած ըլլայ, միշտ Ազգին Երեսփոխանն է :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, բուէ՛. 1884 ի եղա- նակի ընդունելութիւնն բուէի զրուի :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Կարծեմ թ իւրիմացութիւն մը տեղի ունեցու :

Առեմնապետ Էֆէնտի կըսէ թէ՛ անցեալ տարուան ընտրութեան մէջ ապօրինաւորութիւն մը տեղի չ'ունեցու :

Հարկ է գիտնալ թէ Էջմիածնայ Տաճարին մէջ ընտրութիւնն կրկին է : Առաջնոյն կը մասնակցին բացառիկ ևս գրաւոր կերպիւ, իսկ երկրորդ ընտրութեան մի միայն ներկայք : Արդ, առաջին քուէարկութեան միջոցին մինչդէռ Մակար Սրբազան ՚ի ղիմաց Տաճկաստանի Հայոց՝ միմիայն երկու քուէ տալու իրաւունք ունէր, սինդէք թէ ինք 130 քուէ պէտք է որ տայ և յաջողեցու տալ, և ահա այս է սխառման որով այն ժամանակ ընտրութիւնն անվաւեր հրատարակուեցու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սխալ է :

ԶԱՆԱԶԱՆ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ. — Փոկո՛ւմն վիճարանութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինդլին ըստ բաւականին լրատարանուեցու, և որովհետև յամենաւս Երեսփոխանք վիճարանութեան փակումը կը պահանջեն, ուստի առայսօրոգոյցք բուէին պիտի դիմեմ :

ՈՒՐԻՇ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ. — Վիճարանութեան չարունակութիւնն կուղենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որո՞նք են վիճարանութեան չարունակութիւնն ուզողներն :

ԱՐՔԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Ես :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նոյնպէս ալ ես :

ԱՐՔԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Այո՛, ըստ մեր ներքին Կանոնադրի 34 րդ. յօդուածոց տրամադրութեան (Կըրքեմու.) վիճարանութեան փակման դէմ պիտի խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ օրինի Գիւանս վիճարանութեան փակման դէմ խօսք կուտայ միայն մէկ Երեսփոխանի և առաջ պիտի կատարուի քուէարկութիւնը :

ԱՐՔԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Ինչ որ ալ ըլլայ ժողովոյ տարիք որոշումը, պէտք չէ հասցնելու տալ զոյն :

Մանուցեալ ինդրոյն վրայ Նորատունկեան Էֆէնտիի կողմանէ նկատուելեան արժանի մի քանի կէտեր յառաջ բերուեցան, զորս պէտք չէ անտես առնել, արաքային մէջ ու է զղջման տեղի չ'տալու համար :

Ուստի լաւ կը լինի նախ քան զընկարկութիւն, այդ կէտերուն վրայ լրատարանիլ, զի ինդլին մեծ է և կենական :

ՄԵՐԵԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Ես կը կարծէի թէ՛ նախ Տէի դրուձեան վրայ պիտի դառնային մեր վիճարանութիւնը և ապա անցնէինք Սինօղի գրոյն : Սակայն եղած խօսքերէն կերևայ թէ այս վերջի կէտիս վրայ ևս կրնամք վիճարանիլ : Եթէ այդպէս է, Ատենապետ էֆէնտի, ես ևս այդ մասին ունիմ ըսելիքներ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս պահ մ'առաջ յայտարարեցի, խնդիրն է նոր 1884 ի եղանակին վրայ վիճարանիլ և ապա տնցիլ Սինօղի գրոյն :

ՄԵՐԵԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Սակայն Ար. փրարեան էֆէնտի առաջարկն կը նշանակէ բայ թողուլ վիճարանութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Առ Արփիարեան ԷՅ.) Վիճարանութիւնն շարունակել կառաջարկէք, Արփիարեան էֆէնտի, սակայն հարկ է յայտնել միանգամայն թէ՛ Տէի եղանակի մասին է Ձեր այդ առաջարկն թէ ոչ Սինօղի գրոյն :

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՅ. — Իմ առաջարկն էր 84 ի ընտրական եղանակի վիճարանութիւնն բայ թողուլ, սակայն վիճարանութեան պահուն, կարծեմ ոչ որ ինքզինքն կաշկանդուած կրնայ նկատել չլսօսիլ նաև Սինօղի գրոյն մասին, զի խնդրոյն բնութիւնն է որ այդպէս ընել կը պահանջի :

ՄԿՐԵԱՆ Յ. Յ. ՔԱՀՅ. — Քուէի դրէք 84 ի եղանակի ընդունելութիւնն :

ԱՅՅԵՆԻ. — Այո՛, բուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ըստ սրում բազմաթիւ նատարաններէ Երեսփոխանք բուէ կը պահանջեն, ուստի Դիւանիս պարտքն է Ձեր բուէին :

Ենթարկել նախ վիճարանութեան շարունակութիւնն և ապա փակումը :

Հետևաբար քուէարկութիւն կատարուելով, Ժողովն 19 ի դէմ 21 քուէով ԿՈՐՈՇԷ շարունակել զվիճարանութիւնն ի վերայ 1884 ի ընտրական եղանակի :

(Թե՛ր Կուէարկութեան)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը տեսնէք Տեարք, որ Ժողովն խնդրոյն վրայ վիճարանութեան շարունակութիւնն կուզէ : Ուստի կը հրաւիրեմ զՁեզ առ այս՝ խօսք առնուլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Քիչ մ'առաջ Սինօղի մէկ պաշտօնագիրը կարդացուեցաւ հոս որ անշուշտ վարչութեան միջոցաւ եկած է : Արդ կը հարցնեմ՝ մի՞թէ Ինքն ալ այդ թուղթն ուսումնասիրած և առ այս զարժանն անօրինած է՞ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քիչ մը առաջ Սինօղի զիրն երբ յանձնուեցաւ Դիւանիս, Պատրիարքական Տեղապահ Հայրն յայտնեց թէ՛ երէկ միայն ընդունած էր զայն, և որովհետև վարչական նախն մէկ շարքի կուզէ և խնդիրն ալ ստիպողական է, հետևաբար հարկ դատեր է Ազգ. Ժողովոյս այսօրուան նախն բերել այդ զիրն :

Կարծեմք թէ Տեղապահ Հօր կողմանէ տրուած այն յայտարարութեան վրայ՝ ոչ ևս այդ տեսակ զխտորութիւնք աւելորդ են :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Սինօղի այդ պաշտօնագիրն մեր բարեխնամ Տէրութեանն առ մեզ շնորհեալ օրինաց բոլորովն կը հակառակի : Այդ եղանակաւ ընտրութեան մասնակցիլն՝ Սահմանադրութիւնն ոտնակոխ ընել ըսել է : Սինօղի ուրիշն գործիք եղած՝ կուզէ

զմեղ ևս թակարդի մէջ ձգել, բայց չ'ալիտի
խարուհեր :

Ուստի, ինչպէս ըսի, կառաջարկեմ այդ
զիրն յանձնել Վարչութեան, յանձնարարելով
նմա որ անմիջապէս հրահանգ զրկէ Գաւառա-
կան Առաջնորդաց, որպէս զի զգուշանան պա-
աստիանելէ Սինօղի հրաւերին, և ի հարկին
ծանուցանեն թէ՛ իրենց օրինաւոր ներկայա-
ցուցիչ մարմինն այս Ազգային Ժողովոյն :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրաւիրեմ Ատե-
նարան Էֆէնտին որ Սինօղի գրոյն մասին իւր
կտրծիքն վերջի թողով, այժմ միակայն ընտ-
րական եղանակի մասին խօսի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ընտրութեան Ե-
ղոնակի մասին՝ իմ կտրծիքս է ճիշտ 84 ի հա-
մաձայն չարծիլ և այս անգամ :

ԶԵՐՍՁ Մ. ԷՖ. — Մեր պաշտօնակիցնե-
րէն Նորատունկեան և Ճանքմեան Էֆէնտիք
ինչորոյն վրայ խօսելով փորձ մ'ըրին 1884 ի
եղանակին իւր անզօրծաղբելի ցոյց տալու :
Հետեւարար եւս խօսք կ'առնուեմ, իւր ան-
դամ Ատենապետաց Գիւանի, պաշտպանելու
համար 84 ի դրութիւնն և հերքելու համար
յառաջ բերուած պատճառներն :

Անոչառապէս խօսելով, Ռուսոյց Կոռա-
վարութիւնն՝ իւր օրինաց զօրծաղբութեանը
վրայ սնդեղելով՝ իւր պարտքն և եթ կը կա-
տարէ, զտով Սինօղին, նա ևս օրինաւորու-
թեան ձառնուել մէջ կը գտնուի, զի կուզէ գոր-
ծադրել իւր վրայ դրուած օրէնքն, ինչպէս որ
մենք ստո կուզեմք հետևիլ կէտ տա կէտ մեր
Սահմանադրութեան արտօնողութեանց, թէ և
անոնցմէ ոմանք օտորամուտ եղած լինին :
Եթէ այդ Կառավարութիւնն և այդ Սինօղն
Ժողովոյն համար քննադատելի հանգամանք
մ'առնին, այն ալ իրենց 1866 ին թուանց զիր-
բէն է աւելի, երբ շեղեցան իրենց զրաւոր

օրէնքէն, այլ այժմ լոկ իրենց պարտքը կը
կատարեն : Մենք ալ կատարենք մեր պարտ-
քը. մենք ալ ունինք Սահմանադրութիւն
մը որոյ 61 թգ. յօդուածը Ժողովոյն կը
յանձնէ մասնակցիլ Կաթողիկոսի ընտրու-
թեան. եթէ այլք այսքան նախանձախըն-
դիր են իրենց օրէնքը զօրծաղբելու, մենք
ինչո՞ւ նախանձախընդիր չը լինինք մեր օրէն-
քը զօրծաղբելու համար :

Անցնելով բուն խնդրոյն, կը տեսնեմ թէ
84 ի եղանակն զխաղաղութեանց կենթարկուի
իր անընդունելի. բայց քանի որ Էջմիածնոյ
Գահուս վրայ Կաթողիկոս մը կամ բանակցու-
թեան զլուս մը չունինք այժմ, որոյ անկ է
երթալ համուղել Ռուս Կառավարութիւնն Պա-
լատէնիայի ինչ ինչ յօդուածոց բարեփոխման
մասին, 84 ի եղանակին ընդունելութիւնը չենք
կրնար կռել : Մեզ միակ բան մը կը մնայ ը-
նել. — Ունի՞նք հաւատք 84 ի եղանակի մա-
սին. այո՛ — Սրղարութեան համաձայն է այն.
այո՛, վասն զի այդ եղանակն Ռուսահայոց և
Քրիստոնէոց մինչև իրաւախօսութիւն մը յառաջ
բերած է, և անոյ զօրծաղբութեամբն՝ ուրիշ
բուն ըրած չենք լինիր, եթէ ոչ ամենայն Հա-
յոց Կաթողիկոսի ընտրութեան հաւատարապէս
մասնակցիլ, սա տարբերութեամբ որ քուէար-
կութիւնը փոխոնակ մէկ գմբեթի տակ կա-
տարուելու, երկու գմբեթի ներքև կը կատար-
ուի, այսինքն երկու սեղաններու վրայ, և
սոյս աղբիւնքը կը միանայ : Ուրեմն մասնակ-
ցինք այժմ ևս համաձայն 84 ի եղանակի,
թողով ստապաց Կաթողիկոսին՝ գծել ընտրու-
կան որոշ եղանակ մը և վերադնի քննութեան
ստնուել Պալատէնիայն և ներկայացնելու բարե-
փոխումներն :

Համախօսութիւն մը կազմելու մտեցած
ենք 66 ի անիրաւ դրութեան տեղ ընդունելով
84 ի արդարագոյն եղանակը, որ սակայն դեռ
կրնայ կատարելագործուիլ, Երբ առաջին քայն
մենք կ'առնուեմք, պէտք է սոսկածք որ քուշ
մը ևս այլք առնուեմ, մասնաւոր այն նորոնոր

Կաթողիկոսը սխախ կարենոյ անդեւ թէ սր-
դարութեան հակառակ է պահանջել որ Տաճ-
կահայք ոտնակոխ ընեն իրենց օրէնքը Ռուսա-
հայոց օրէնքին հետեւելու համար :

Ոմանք Հայոց աղբը յայժ տկար կը նկա-
տեն և կը խորատեն տեղի տալ Պարզէնիայի
տաճկ. այժ տկար ենք , բայց որչափ ալ օր
տկար լինիմք , շէնք կրնար մըջունեն աւելի
տկար լինել : — Կը յիշեցնեմ Ձեզ Ալեկիթի-
մարի մըջունն , որ բոստանն անգամ վրանին
ցիցնի վեր ելաւ , թէ և Ալեկիթիմար ամեն ան-
գամունն մատին ծայրովը վար կը գլորէր զայն .
մըջունն իւր որդանը նպատակին դիմեց միշտ
և հասաւ վերջագէս : Այս կ'օճարուն խնդրոյ
մէջ երբ արդարութիւնը մեր կողմն է , պէտք
է որ մեր իրաւունքը պաշտպանենք գէթ այդ
մըջունին չափ արութեամբ և հաստատամտու-
թեամբ :

ԱՐՔԻԱՐԵԱՆ Ա. ԷՅ. — 1884 ի եղունակաւ
ընտրութիւնն արդիւնաւոր կամ փութակար լի-
նեն զխոնակ՝ կարեւր կէտ մ'է :

Նորաստեղծեան Էֆէնտի , պահ մ'առաջ
այս կէտիս վրայ խօսով , բեկման պարագայ մը
յիշեցոյց արգ հարկէ մեզ այս պարագայն նը-
կատողութեան առնուլ , սրգէսդի կարենամք
ուելի հետատեսութեամբ և անցեալէն դասեր
տանով գործել :

1884 ի ընտրութեան բեկումը հետեւեալ
երկու պատճառներէ յտուաջ եկաւ , մինս
մեզնէ և միւսն մեզմէ անկախ :

Ա. Պարսկաստանի Քեմի ներկայացուցիչն ,
թէ և ներկայ , բայց իւր բուէն չ'առաւ : Բ.
ժողովանակ երկու ընտրելեաց , ինչպիս կը պա-
հանջէ օրէնքն , միայն մէկ ընտրելի ներկայու-
ցուցուեցաւ Փաղաւոր-Կայսեր ի վաւերացումն :

Իսկ մեր Տաճկահայոցս կողմանէ տեղի
որուած պատճառն սա էր : — Վանայ և Մոյ
աղբոյնոց կողմանէ հեռադրեր հասան Սինօ-
ղին , որով կողմէն իրենք անձամբ մասնակի-
ցիլ Կաթողիկոսական ընտրութեան , թէ և Սի-

նօզն նկատողութեան շատ արգ հեռադրերն
և ընտրութեան տեղեկագիրն ստորագրելով
մատոյց Կայսեր , բայց Կայսերն հարցոյց թէ՛
ինչո՞ւ պէք հեռադրերն նկատողութեան չ'առ-
նուեցան :

Ահա ասոնք էին այն պատճառներն , ու
բոցմով 1884 ի ընտրութիւնն անվաւեր հրա-
տարակուեցաւ :

Խօսար վերջացնելէ յտուաջ , Սինօղի գրոյն
մասին ևս դիտողութիւն մը ունիմ , որ կար-
ծեմ կրնայ իւր կարեորութիւնն ունենալ :

Գոյտնի է թէ Սինօզն զիմած է ուղղակի
վիճակուոր Առաջնորդաց առ ի մասնակցութիւն
ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց :

Արդ , Եպիսկոպոսն որ ձեռնադրեալ է
ոչ թէ Սահմանողութեան համաձայն , այլ
ի Սուրբ Էջմիածին , միթէ՞ պարտաւոր չէ
հնազանդիլ Նիս , որպէս և սկստած է :

Այս կէտն խնդիր եղաւ նաև ի Ռուսաս-
տան , մասնաւոր շրջանակաց մէջ : Ուստի
սխախ խնդրելի Կրօնական Ժողովոյ Գեր-
Ատենապետ Սյրապանէն , որ եթէ կարելի է ,
հաճի առ այս լուսարանել զմեզ . . . :

ՁԱՅՆԵՐ. — Ատոնք խնդրէն դուրս
խօսքեր են :

ԱՐՔԻԱՐԵԱՆ Ա. ԷՅ. — (Շարունակելով)
Այն Եպիսկոպոսն որ ձեռնադրեալ է յ'Էջմիածին)
պարտաւոր է՞ , կըլէ , հնազանդիլ անոր թէ ոչ
եթէ պարտաւոր է , յայնձում չեմք կարող հրա-
հանգ առ նմա շարժիլ այս ինչ կամ այն ինչ
կերպով , իսկ եթէ ըստի թէ՛ ուղղակի Աղբային
Ժողովոյն պարտաւոր է հնազանդիլ , այն ատեն
միայն կրնամք Տէ ի եղունակաւ մասնակցիլ
Կաթողիկոսական ընտրութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ի պաշտօնէ կը սա-
տասխանեմ , Արիւիարեան էֆէնտիի հարցման ,
թէ՛ երբք այն օրինակ խնդիր մը չի կրնոր
յարտցուիլ , վասն զի ոչ որ կրնար տարա-

կուսիլ թէ ըստ Սահմանադրութեան՝ Առաջնորդք Տաճկաստանի Հայոց, ինչպէս որ Կեդրոնական Վարչութեան կողմանէ կարգուած են, Հետևարար նմա պատասխանատու են և անոր հրահանգաց համեմատ շարժիլ պարտաւոր :

ԶԱՅՆԵՐ — փակուած վիճարանութեան, սիլ բուռ է :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյս փակման արդեալ ժամն հասած է և տակաւին տասն և յոթ Երեսօրեանք կան, որք լսուք ատած և անուանին արձանագրել տուած են . հետևաբար մեզ երկու բան միայն կը մնայ ընելիք : այն է որ կամ վիճարանութեան փակումը պիտի քուէարկեմք այսօր իսկ, և կամ այն է՝ որ նիստն փակելով՝ վիճարանութեան շարունակութիւնն թողունք յառաջիկայ նստին :

Այս կէտիս վրայ միայն խօսք կրնամ տալ Երեսօրեանաց :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԻԻ Յ. ԷՖ. — Արդարև փակման ժամն հասած է, այլ սակայն եթէ Սինոդի առ զրոյն մասին՝ որ կարի ստիպողական է, տասնոց վերջնական տնօրինութիւն մը ընելու ձգենք երթանք և այսպէս խնդիրն տակաւին ուժի օր ևս առ կախ վիճակի մէջ թողումք, մեծ պատասխանատուութիւն մը պիտի հրաւիրած ըլլամք մեր վրայ : Ուստի եթէ ժողովք կը հաւանի, միայն հինգ վայրկեանի միջոց շնորհել ինձ, պիտի ներկայացնեմ Ձեզ այն պիտի մի առաջարկ՝ որով խնդիրն այսօր իսկ կարենայ իւր լուծումն գտնել :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — 1884ի վիճարանութեան շարունակութիւնն արդարև կրնայ յարձրոյ նըստին ալ մնալ, բայց Սինոդի գիրն որ ստիպողականութիւն ունի, ինչպէս յայտնեց Մէրեէմ-Գուլի Էֆէնտի, հարկ է որ այսօր իսկ իւր լուծումը գտնէ :

Սինոդի պաշտօնագիրն, ըստ օրինի վար-

չութեան կը վերաբերի, բայց դիտուածն այնպէս բերաւ որ հոս զայ, հետևարար մենք ևս այժմ ուրիշ բան չեմք կրնար ընել եթէ ոչ վերադարձնել զայն առ վարչութիւն :

Բայց որովհետև Ազգ. Ժողովոս որոշած է ըստ իւր Սահմանադրութեան մասնակցիլ Կաթողիկոսի ընտրութեան, հետևարար այս յըսուամբ ընելով հանդերձ պէտք է որ ժողովըս յանձնարարէ վարչութեան՝ անմիջապէս օրինական հրահանգն տալ Գաւառական Առաջնորդաց և վարչութեանց՝ կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան համար Սինոդին իրենց ուղղեալ հրաւիրագրի մասին : Երբ այսօր այս օրինական յըսումն կատարենք, ժողովոյս համար այլևս Սինոդի պաշտօնագրի խնդիր չ'մնար :

ՍԵՂԱՅԵԱՆ Կ. ԷՖ. — Այո՛, այլ ևս խօսելու իսկ հարկ չ'կայ : Գրենք վարչութեան որ հարկ եղած օրինական հրահանգն տայ Առաջնորդաց :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԷՅ. — (Ատենապետ կրօնական ժողովոյ) Որովհետև այդ պաշտօնագիրն վարչութեան կը յղէք և կուզէք որ օրինական հրահանգ տայ առ Գաւառական Առաջնորդս, արդեօք կը կամի՞ք որ նա ևս առ այս բերէ զիր կարծիքն ժողովոյդ, թէ ոչ ինքն տնօրինէ և գործադրէ զոր ինչ արժանն է :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԻԻ Յ. ԷՖ. — վարչութիւնն Առաջնորդաց պիտի հաղորդէ ընդ ինքի՞ հարկ եղած օրինական հրահանգն ի մասին Սինոդի զրոյն, իսկ խնդրոյն վրայ կրնայ իւր կարծիքն ևս բերել մեզ :

(Յօշուտ հասանքի նշաններ)

Ձայս ատելով, Մէրեէմ-Գուլի Էֆէնտի ի զիր կանուս հետևեալ բանաձևն, և զայն

մի քանի նրեաբխտանաց ևս ստորագրել սույն յետոյ կը յանձնէ Դիւանին , զոր կըմբխտու Ատենադարի Էֆէնտի :

«Ստորագրեալ նրեաբխտանքս նկատելով որ փակման ժամն հասաւ և չէ կարելի Օրակարգին Կաթողիկոսական խնդիրն այսօր վերջացնել :

Նկատելով որ Էմիածնայ Սինօգէն եկած թուղթն այնպիսի ծանրակշիռ կէտեր կը պարունակէ , որք անմիջական տնօրինութեան կը կարօտին ,

Կառավարկեմք՝

Ա. Յղել Սինօգի գիրն առ Վարչութիւն յանձնաւարելով որ Գաւառաց ուղղակի մասնակցութեան հրաւերին նկատմամբ հարկ դատած օրինական հրահանգն տայ անմիջապէս Գաւառական Առաջնորդաց և թղթոցն ամբողջութեան վրայ իւր կարծիքն բերէ յառաջիկայ նստին :

Բ. Յաջորդ նիստն գումարել ութ օրէն :

Ֆ. Ղազարոսեան

Յ. Մերեմ-Գուլի

Կ. Սըվանեան

Մ. Զօպանեան

(Յէշ Էմբիցիօն)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՛վ որ սոյն բանաձևի ընդունելութեան համակարծիք է , թող հաճի սույն իւր բռնէն :

Հետևարար բռնակութիւն կատարուելով , Ժողովն Ա ի դէմ միաձայն հասնութեամբ ԿԸՆԳՈՒՆԻ զսոյն բանաձև և ԿՈՐՈՇԷ յղել զսոյն առ իւր Վարչութիւն Կ գործադրութիւն :

Նոյնպէս Ժողովն ԿՈՐՈՇԷ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան խնդրոց վիճարանութեան շարունակութիւնն թողուլ իւր յաջորդ նստին :

Ատենոնը կը վերնայ ժամ 7 ին , յաջորդ նիստն 8 օրէն և ի դանիակ գումարելու որոշմամբ :

Ատենադպիր

Ատենապետ

Յ. ՊՕՇԵՆԱԿԵՆՍ

Տ. ԵՌԻՍՈՒՅԵՆՍ

Ն Ի Ս Տ Ժ Է.

22 ՓԵՏՐՎԱՐ 1885

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
ՆԿԵՆՑԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպօ. Աէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բաղրատունի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Աէթեան
- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մասթէոս Եպօ. Իզմիրեան Բ Պ
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան

Բ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան Բ
- 10 Խորէն Քահ. Փէշլիվեան Բ 2
- 11 Ոսկի Քահ. Օհանեան
- 12

Գ. Վիճակ

- 13 Ելիշէ » Այվաղեան
- 14 Յովհաննէս Վ. Մըշարունի Բ
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ
- 16

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվաղեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 19 Սուքրաս Քահ. Ստեփանեան Բ
- 20 Գարրիէլ » Խանճեան Բ 2

- Բ Բացակայութիւն առաջին :
- 2 » երկրորդ :
- Պ » բանաւոր պատճառաւ :

ԱՅԵՐԵՍՎԱՆՔ
Ա. Վիճակ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ԿԻՈՒԿ-ՓԱՂԱ-
ԵՆ ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ ՂՈՒՐԱ

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ 2
- 22 Կարապետ Աղարդմանեան Բ 2
- 23 Բարթող Քիրքճիպաշեան Բ 2
- 24 Յ. Մէրեմ-Գուլի
- 25 Տիգրան Հիւնքեարպէյէնտ.
- 26 Աւետիս Սուրէնեան Բ 2
- 27 Տօքթ. Այվաղեան
- 28 Գէորդ Այվաղեան Բ Պ
- 29 Յակոբ Եէմէնիճեան
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարակեան
- 32 Միհրան Ինճէեան
- 33 Մարտիրոս Էքսէրճեան
- 34 Մանուէլ Պէշիրեան Բ 2
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ
ՊԷՂԻԿՅԱՂ

- 38 Բարսեղ Հալաճեան
- 39 Յովհաննէս Քէրէտոճեան
- 40 Մելքոն Պարոնիկեան
- 41 Լեւոն Բարամանեան Բ Պ
- 42 Մարուգէ Յրէնիկեան Բ Պ
- 43 Պօղոս Էնքսէրճեան
- 44 Յակոբ Պօշնիկեան

ԻՆԱԿԻՒՏԱՐ Ս. ԽԱՂ

- 45 Սիմէօն Յէլէկեան
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ 2

47 Գասպար Գասպարեան Բ 2

- 48
- ԻՆԱԿԻՒՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ
- 49 Պօղոս Թորղոմեան Բ 3
- 50 Տրդատ Փափաղեան Բ 2
- 51 Յակոբ Հանճեան Բ 2
- 52

Գ. Վիճակ
ԳԱՍՊԱՐ-ԲԱՂԱ

- 53 Գասպար Զերաղ Բ 2
- ԲԵՐԱ
- 54 Գրիգոր Աէլիմիլէճեան
- 55 Ղազար Հոլուեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօշաճեան Բ 2
- 58 Վիշէն Սրմանեան
- 59 Սիւնքերիմ Մանուկեան
- 60 ՀամարձուՄաղպուլի.
- 61 Մանուկ Ալանեան Բ Պ
- 62

ՄԻՂԱԳԻՈՂ

- 63 Տիգրան Եուսուֆեան
- 64 Մկրտիչ Գաղանճեան
- 65 Մկրտիչ ձանրմեան
- 66 Ստեփան Տամատեան
- 67
- ՊԷԼԳՈՂ ԵՆ ՂԱՅԱՐԻՊ
- 68 Միլթայէլ Մամիկոնեան Բ 2

Գ. Վիճակ
ՔՈՆԳԼԻՆԱՆՈՂ ԵՆ ԻՃԱՒԻԷ

- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ 2
- 70 Արմեն Մաքսուտեան Բ 2

| Գատըզիւղ | ԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ | Նիկոմիդիա |
|---------------------------|--------------------------------|--------------------------|
| 71 Գառնիկ Յովակիմեան | | 120 Կարապետ Ս. Իւթիւճեան |
| 72 Կարապետ Հաղարեան | Բ 2 Ա. Վիճակ | Ակն |
| Նարլը-Գաբու. | 2մշկածագ | 121 Յակոբ Գորեան |
| 73 Միհրան Տէօբմէճեան | 401 Գաղատիա | Ղարաճիսար |
| Եհնի-Մամալիկ Սամարիոյ | | 122 Կարապետ Երէցեան |
| 74 | 402 Ատանա | Արաբկիր |
| Թօփ-Գափու. | 403 Մինաս Զերազ | 123 Կարապետ Խաչիկեան |
| 75 | Սղերղ | Բաղէղ |
| Էլուպ Ս. եղիա Է. Ս. | 404 Մատթէնոս Ալէքսանեան | 124 Արփիար Արփիարեան |
| Աստուածածին | Եօզղատ | Գ. Վիճակ |
| 76 | 405 Մալաթիա | Թեքիրտաղ |
| Գուրու-Զեղմէ | 406 Գէորգ Վարդանեան | 125 Տիգրան Գ. Արնանեան |
| 77 Կարապետ Սրվաճեան | Իգմիր | Կեսարիա |
| Հիսար Է. Պօյաճի-Գիւղ | 407 Եգիպտոս | 426 Խարբերղ |
| 78 | 408 Աբրահամ Մուրատեան | 127 Պալքեհսեր |
| Նոր-Գիւղ Է. Սրեկիս | Բ. Վիճակ | 128 Ստեփան Գօլօլեան |
| 79 | Պրուսա | Մուշ |
| 80 Մկրտիչ Կիւմիւշեան | Բ 2 Պրուսա | 129 Ստեփան Փափազեան |
| 81 Ռէթէոս Թազէոսեան | Բ 2 109 Քրիստոստուր Ղաղարոսեան | Տիլրիկ |
| 82 Ներսէս Երէցեան | Բ 2 Եւդոկիա | 130 Նշան Գարազաշ |
| Քարակեօմքիւկ | 140 Կարապետ Կիւրճեան | Զէյրուհ Է. Մարաշ |
| 83 Յովհաննէս Թորոսեան | Բ 2 Ամասիա | 131 Տրապիզօն |
| 84 Կարապետ Փանոսեան | Բ 2 141 Համբարձում Ալաճաճեան | 132 Ե. Վիճակ |
| Ե. Վիճակ | Բալու. | Պաղտատ |
| Սամարիա | 142 Յովհաննէս Ազնաւորեան | 133 Կարապետ Մէթեան |
| 85 Յակոբ Արշակ | Եղեսիա | Տիգրանակերտ |
| 86 Սարգիս Աղաբէզեան | Բ 2 143 Յակոբ Իւթիւճեան | 134 Միհրան Չօպանեան |
| 87 Յովհաննէս Նուրեան | Բ 2 Մանգըլիս | Վան |
| 88 Ռուբէն Կիւմիւշիկերտեան | Բ 2 144 Հանգն | 135 Մարկոս Աղաբէզեան |
| 89 | 145 Երզնկա | Բ 2 136 Հալեպ Է. Այնբապ |
| 90 | 146 Ռեթէոս Պէրպէրեան | 137 Սեբաստիա |
| 91 | Գ. Վիճակ | 138 Մկրտիչ Ս. Մէլիբեան |
| 92 | Կարին | Ռուսնուգ |
| 93 | 147 Աերովբէ Ազնաւորեան | 139 Բաբերղ |
| 94 | Բ 2 Քեօրանես | |
| Խասգիւղ | 148 Աւետիս Թշնկրեան | |
| 95 Ռուբէն Պուլիւրեան | Աղրիանուպօլիս | |
| 96 Յակոբ Խանաանեան | Բ 2 149 Յակոբ Պարոնեան | Բ 2 140 |
| 97 Նիկողոս Թիւլպէտճեան | Բ 2 | |
| 98 Նշան Փափազեան | Բ 2 | |
| 99 | | |
| 100 | | |

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԳՍՄԲ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

| | | | | | |
|-----|----|-----------|---------|--------------|------------|
| 1. | Տօ | Խորէն | Սրբեպօ. | Նար—Պէյ | Ա. Արենդեբ |
| 2. | » | Սիսէոն | Եպօ. | Սէֆէրեան | Բ. » |
| 3. | » | Մատթոս | » | Խղմիրլեան | |
| 4. | » | Գարեգին | Վրդ. | Թաթարեան | |
| 5. | » | Վահան | » | Տ. Մինասեան | Ա. Արենդեբ |
| 6. | » | Ցանատ | » | Ոսկանեան | Բ. » |
| 7. | » | Յակոբ | » | Ս. Փափանդեան | |
| 8. | » | Յովհաննէս | » | Սրչարունի | |
| 9. | » | Յովհաննէս | Քհյ. | Մլրեան | |
| 10. | » | Սահակ | » | Տ. Մարգարեան | |
| 11. | » | Սուբիաս | » | Ստեփանեան | |
| 12. | » | Գրիգոր | » | Սճէմեան | |
| 13. | » | Խորէն | » | Փէհլիլեան | |
| 14. | » | Կարապետ | » | Սէթեան | |

ԱՆԳՍՄԲ ԲԱՂԱԲՅԱՆ ԺՈՂՈՎՈՅ

| | | | | |
|-----|----------------|---------------|--------|------------|
| 1. | Ազնաորեան | Յովհաննէս | Էֆէնտի | |
| 2. | Այվաղեան | Տօք. Նշան | » | Բ. Արենդեբ |
| 3. | Գլըճճրեան | Գէորգ | » | |
| 4. | Թորոսեան | Յովհաննէս | » | Ա. Արենդեբ |
| 5. | Խըարբեան | Գրիգոր | » | |
| 6. | Խօրասանճեան | Թովմաս | » | |
| 7. | Հաղարեան | Կարապետ | » | |
| 8. | Հալածեան | Բարսեղ | » | Բ. Արենդեբ |
| 9. | Մարտոտեան | Սիւնն | Պէյ | Ա. » |
| 10. | Մամիկոնեան | Միքայէլ | Էֆէնտի | |
| 11. | Պապօեան | Պապի | » | |
| 12. | Սթիմարսճեան | Գէորգ | » | |
| 13. | Փէչտիմալճեան | Տօքթօր Տիգրան | » | |
| 14. | Քիւրքճիխանլեան | Կարապետ | » | |

ՊԵՐՈՒՆԵԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻ

1. — Բացակայութիւնք .
2. — Երեսփոխանական Հրատարակչի Լեւոն Էֆէնտի Գարամաճեանի .
3. — Մանթոթութիւն ի Գիւանէ ի մասին ժ.Ձ. եւ ժ.Է. նիստերու առննազրութեանց Հրատարակման յայտման .
4. — Պաշտօնագիր Ազգ. Վարչութեան կրօն. ժողովոյ յաղագս հաստատման մի ընծայարանի .
5. — Խնդիր Հրատարեցուցման ժողովոյ նիստերէն անպայման ժամանակաբացակայող երեսփոխանաց .
6. — Կոնդակ օրհնութեան Ամեն. Տ. Կայի Ս. Պատրիարք Հօր առ Ազգ. Երեսփոխանական ժողով .
7. — Հարցում Գուրգէն Յ. Էֆէնտի ի մասին զորձառնութեանց Ազգ. ժողովէն կարգեալ Երևոտական Յանձնաժողովոյ .

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Խնդիր կաթողիկոսական եւ Տեղեկագիր համարատուութեան կաթողիկոսական Բ. Յանձնաժողովոյ .

